Ա. ՂԱՐԻԲՅԱՆ, Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

## ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԴԱՍԱԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

491.99-5
Ղ-47

51

491.99-5
Ղ-47
04 MAY 2010

Ա. ՂԱՐԻԲՅԱՆ ԵՎ Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

## ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՍՔԻ ՁԱՐԳԱՑՈՒՄ

ԴԱՍԱԳԻՐՔ
ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

*ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՍՍՌ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ*

ՈՒԹԵՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1951

19 JUN 2013

6884

А. ГАРИБЯН И С. КАЗАРЯН

Армянский язык

Грамматика, правописание и развитие речи

Учебник для III класса

(На армянском языке)

Айпетрат, Ереван, 1951 г.

# Ի. ԿՐԿՆՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1. — Կարդացե՛ք ստանավորը և պատմեցե՛ք բովանդակությունը։*

## ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ԱՆՑԿԱՑՐԵԼ ԱՄԱՌԸ

*Անց ենք կացրել ամառը*
*Անտառներում, դաշտերում*
*Ու աշխատել հասկառաս*
*Մեր կոլխոզի արտերում։*
*Խուրձ ենք կրել ոսկեգույն,*
*Դեզեր կազմել ահագին,*
*Արտի հասկն ենք հավաքել,*
*Ջրել մարգերն ու այգին։*
*Գոբծից հետո խմբովին*
*Գնացել ենք, լողացել,*
*Շատ հաճախ էլ ստվերում*
*Նստել՝ գիրք ենք կարդացել։*
*Այսպես ուրախ մեզ համար*
*Ամբողջ ամառն է անցել։*

*Պատմեցե՛ք՝ ինչպես են երեխաները օգնել կոլխոզին։ Ինչպես են հանգստացել նրանք։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2. — Պատմեցե՛ք՝ ինչպես եք հանգստացել ամառը. ինչ եք արել տանը, դաշտում, կոլխոզում։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3. — Կարդացե՛ք ստանավորի այն տողերը, որոնք պատասխանում են վերևի հարցերին։*



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4. — Գրեցե՛ք՝ ինչ են անում պիոներները առաջին նկարում.

ինչ են անում պիոներները 2-րդ նկարում.

ինչ են անում պիոներները 3-րդ նկարում.

ինչ են անում պիոներները 4-րդ նկարում, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ նկարներում։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5. — Գրեցե՛ք, թե ինչ են անում պիոներները բոլոր նկարներում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6. — Գրեցե՛ք՝ ինչ եք արել ամառը։ Հաշվեցե՛ք, թե քանի՞ նախադասությունից է կազմված ձեր շարադրությունը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 7. — Կարդացե՛ք և պատմեցե՛ք։

## ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Հնձի ժամանակն էր։ Կոլխոզի աշխատանքի եռուն օրերն էին։ Ոսկեգույն արտերը թեթև քամուց ծփում էին։

Էլ հանգստություն չկար, հնձում էին առավոտից մինչև իրիկուն, երբեմն էլ գիշերով։

Կիրակի օր էր։

Վաղ առավոտյան օղակավար Գագիկը իր օղակի հետ ներկայացավ կոլխոզի նախագահին ու ասաց.

— Բարև՛, ընկեր Հմայակ։ Եկել ենք Ձեզ օգնելու։

— Շատ լավ եք արել,—պատասխանեց նախագահը, կանչեց բրիգադիր Միսակին ու պատվիրեց ցույց տալ պիոներներին, թե որտեղ պետք է հասկ հավաքել։

Քիչ հետո օղակը, շղթայաձև շարված, հասկ հավաքելով առաջ էր գնում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 8.—Հաշվեցե՛ք՝ քանի՞ բառից է կազմված վերևի հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և վերջին նախադասություններից յուրաքանչյուրը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 9. — Վերևի հոդվածից ընտրեցե՛ք միավանկ բառեր և գրեցե՛ք տետրերում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 10. — Վերևի հոդվածից ընտրեցե՛ք բազմավանկ բառեր և գրեցե՛ք տետրերում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 11. — Վերևի հոդվածից ընտրեցե՛ք 10 բաղմավանկ բառ և գրեցե՛ք տետրերում՝ բաժանելով վանկերի։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 12. — Վերևի հոդվածից ընտրեցե՛ք ու արտագրեցե՛ք այն բառերը, որոնց մեջ լսվում է ը, բայց չի գրվում։ Բաժանեցե՛ք այդ բառերը վանկերի։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 13. — Արտագրեցե՛ք՝ վանկերի բաժանելով. ընդգծեցե՛ք «ը» ձայնավոր ունեցող վանկերը։

## ԵՈՏՀՈՒՆՉ

Զուգված, զարդարված
Թավիշ կանաչով՝
Ցոլում է դաշտը
Ոսկի ճաճանչով,
Մայիսյան այգը
Գոհար է մաղել,
Ծաղկանց թերթերը
Շողել ու շաղել։
Հազար տեսակի
Թռչուն է երգում,
Դաշտերը կանաչ
Զնգում, զրնգում։

Կուրծքս սարալանջ,
Մեջքս թիկնավետ,

Գամ գերանդիով
Զափվելու քեզ հետ,
Մի գժգոհիր, դաշտ,
Քեզ չեմ խնայի,
Ատլաս զգեստիդ,
Երգիդ չեմ նայի։
Ու գերանդիով
Խոտդ կհարեմ,
Սիրուն շարքերով
Լասեր կշարեմ։

Եվ վերջին օրը
Հողդ կպաչեմ,
«Շեն ես, շեն մնաս»,
Սրտանց կկանչեմ։

(Խնկո-Ապեր)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 14.—Որոշեցե՛ք՝ վերևի ոտանավորի առաջին տասը բառը քանի ձայնավոր և քանի բաղաձայն հնչյուններ ունեն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 15. — Գտե՛ք ե և է գրերով սկսվող բառեր և ցույց տվեք, թե ինչպես են արտասանվում, ասացե՛ք մի քանի այլ օրինակներ։

Եղջերուն վայրի կենդանի է։ Երջանիկ մանուկների երգերը լսվում էին ճամբարից։ Երվանդը Երևան գնաց, երկու ընկեր երեկոյան գնում էին զբոսանքի։ Գրքիս երկու էջերը ծալված են։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 16. — Գտե՛ք և գրեցե՛ք ո և օ տառերով սկսվող բառեր և ցույց տվեք, թե ինչպես են կարդացվում, գրեցե՛ք մի քանի այլ օրինակներ։

Օրինակ՝ որդի, ոչխար, որսորդ, որպիսություն, օրոր, օրական, օգնություն, ողջություն...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 17. — Գտե՛ք և գրեցե՛ք «և» գիր ունեցող բառեր, կարդացե՛ք ու բաժանեցե՛ք վանկերի։

Անձրևից հետո արևը պայծառ շողերով լուսավորեց ծառ ու տերև, կանաչ ու խոտ։ Երկնքի վրա սարի ետևից երևաց գեղեցիկ ծիածանը։ Թռչունները բաց արին իրենց թևերը և սկսեցին երկնակամարում վերև ու ներքև ճախրել։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 18. — Ասացե՛ք, թե ինչպես են արտասանվում ստ, սթ, սպ, սփ, սկ, սք, զբ, զդ, շտ երկուական բաղաձայնով սկսվող բառերը, և արտագրեցե՛ք՝ բաժանելով վանկերի։

Ստացական, ստամոքս, ստիպել, ստորակետ, ստուգել, սթափվել, սպասել, սպանել, սփոփել, սկսել, սկիզբ, սքողել, սքանչելի, զբոսնել, զբաղվել, զգուշանալ, զգալ, զգայողություն, շտապել, շտեմարան։

(Բացառություն է ըստ բառը)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 19. — Ը ձայնավորով սկսվող բառեր գտե՛ք և գրեցե՛ք տետրերում։

Օրինակ՝ ընկեր, ընդունել, ընթանալ, ընթացք։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 20. — Արտագրեցե՛ք, ընդգծեցե՛ք երկհնչյուն ունեցող բառերը, ավելացրե՛ք նոր բառեր։

## Ա Ր Ա Գ Ա Ծ Ի Ն

Դու, Արագած, ալմաստ վանան
Կայծակեղեն թրերի.
Գագաթներդ՝ բյուրեղ վրան
Թափառական ամպերի։

Սեգ ժայռերդ արծվի բույն,
Լճակներդ՝ լույս փիրուզ,
Առուներդ մեջքիդ փայլուն
Պերճ գոտիներ ոսկեհյուս։

(Ավ. Իսահակյան)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 21. — Գտե՛ք և գրեցե՛ք յ ձայնակապ ունեցող բառեր։

Օրինակ՝ մայիս, նոյեմբեր, կայարան...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 22. — Գտե՛ք և գրեցե՛ք իա, իու երկհնչյուններ ունեցող բառեր։

Օրինակ՝ թիակ, միակ, ձիու, միություն...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 23. — Արտագրեցե՛ք և լրացրե՛ք բաց թողնված տառերը, կարդացե՛ք ու որոշեցե՛ք դրության և արտասանության տարբերությունը։

Սայլոր—, վար—, հոր— անձրև, ար—ակել, աղ—յուր, համ—ույր, մե—ք, ար—ուն պահակ, հար—ակում, ար—են, ող—, եր—, խա— ե— ա, եր—ում, աղ—իկ, բար—բանալ, վար—ուհի, մար—իկ, խորհուր—, ող—ույն, վեր—ին, օ—նություն, եր—, ջար—ել, երկրոր—, երրոր—, ծա—ում է, երկուշա—թի, երեքշա—թի, ուր—աթ, շա—աթ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 24. — Գրեցե՛ք 10-ական բառ, որոնց մեջ գրվի դ, արտասանվի թ, գրվի բ, արտասանվի փ, գրվի գ, արտասանվի ք, գրվի ձ, արտասանվի ց, գրվի ջ, արտասանվի չ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 25. — Կազմեցե՛ք նախադասություններ հետևյալ բառերով.



Կենդանիներ, արջ, եղջերու, մրջյուն, միջատ, սարդ, բադ, թռչուն, երրորդ, եղբայր, օդաչու, արձակուրդ, ամառ, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ, երկուշաբթի, մարգարիտ, մրգեր, դեղձ, խնձոր։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 26. — Նախորդ վարժությունների բառերից կազմեցե՛ք բառարան այբբենական կարգով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 27. — Գրեցե՛ք հետևյալ կենդանիների անունները՝ ընտանի կենդանիներինը առանձին, վայրի կենդանիներինը առանձին. պատմեցե՛ք՝ ինչպիսի՞ն է ամեն մեկը։



Արջ, աղվես, շուն, կով, առյուծ, վագր, էշ, ձի, հորթ, գայլ, գոմեշ, ուլ, խոզ, սկյուռ, նապաստակ, եղջերու։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 28. — Գրեցե՛ք ընտանի թռչունների և վայրի թռչունների անունները. պատմեցե՛ք՝ ինչպիսին է ամեն մեկը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 29. — Գրեցե՛ք ուսումնական պիտույքների, հագուստի, մրգերի և ծաղիկների անունները։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 30. — Ասացե՛ք նկարված բոլոր առարկաների անունները.



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 31. — Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք առարկաների անունները։

## ՄԵՐ ԿՈԼԽՈԶՈՒՄ

Մեր կոլխոզը մեծ է։

Գյուղից հեռու անտառ է։ Գյուղի մի կողմում կոլխոզի գոմերն են։ Այնտեղ պահում են կովեր, գոմեշներ, ոչխարներ, ձիեր և խոզեր։ Գյուղի մյուս կողմում մի մեծ սրահ կա։ Այնտեղ են լինում կոլխոզի երեք տրակտորը և չորս ավտոմեքենան։ Մեր փողոցի վրա գտնվում է դպրոցը, մի քիչ հեռու մանկապարտեզն է։ Մեր գյուղում կիրակի օրերը կինո են ցույց տալիս։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 32. — Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք առարկաներն ու նրանց հատկությունները ցույց տվող բառերը մի տասին։

## ԿԱՐՄԻՐ ՄԱՏԻՍ

Դու ըերում ես
Կարմիր տրև,
Կանաչ տերև,
Պայծառ ու գով
Նախշուն օրեր,
Թեթև թիթեռ։

(Հ. Հայրապետյան)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 33. — Ուշադիր կարդացե՛ք, արտագրեցե՛ք հատկություն ցույց տվող բառերը։

## ՔԱՋ ԵՐԵԽԱՆԵՐԸ

Բարձր, անտառում տարի լանջին երկու երեխա մորի էին քաղում։ Հանկարծ մի արծիվ իջավ, սուր ճանկերով բռնեց փոքրերից մեկին և ուզում էր վեր բարձրանալ։ Քաջասիրտ երեխան երկու ձեռքով բռնեց արծվի բկից ու բոլոր ուժով սեղմեց։

Արծիվը թուլացավ և շնչասպառ գլորվեց գետին։ Մյուս ընկերը վրա հասավ, վերարկուն ձգեց արծվի

գլխին, իր դոտիով կապեց նրա թևերը։ Փոքրիկ քաջերը ահագին որսը ուսերին՝ դարձան տուն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 34. — Որոշեցե՛ք՝ ինչ հատկություններ ունեն հետևյալ առարկաները, և գրեցե՛ք առարկայի անունը հատկության անվան հետ միասին։

Ջյուն, խաղող, բարդի, նապաստակ, աղվես, արջ, վարդ, մանուշակ, արև, աստղ, աշակերտ, ամառ, ձմեռ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 35. — Դո՛ւք 10 առարկայի անուն և գրեցե՛ք յուրաքանչյուրի անունը հատկության անվան հետ միասին։ օրինակ՝ կանաչ տերև։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 36. — Հնարեցե՛ք մի պատմություն հետևյալ վերնագրերից մեկով.

Մեր կոլխոզում։ Մեր փողոցը։ Հայրենասեր աղան։ Ջանասեր պիոները։ Խորամանկ աղվեսը։ Վախկոտ նապաստակը և այլն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 37. — Գրեցե՛ք՝ ինչ են անում թռչունները, օձը, գայլը, շունը, կատուն, հավը, սոխակը, ձին, կովը։

Օրինակ՝ թռչունները երգում են։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 38. — Արտագրեցե՛ք գործողություն ցույց տվող բառերը և կողքին, փակագծերում, գրեցե՛ք, թե ինչ հարցերի են պատասխանում։

Այս էլ վարպետ Օհանն է,
Որ պահել է այն աղջկան,
Որ կթել է այն կովին,
Որ հարուլ է տվել այն շանը,
Որ գզել է այն կատվին,
Որ բռնել է այն մկանը,
Որ կերել է այն ցորենը,
Որ պահած էր այն տանը,
Որ շինել է վարպետ Օհանը։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 39. — Արտագրեցե՛ք մեծատառերով սկսվող բառերը և բացատրեցե՛ք՝ ինչու են մեծատառով սկսվում։

## ՄԵՐ ԵՐԵՎԱՆԸ

Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է։

Երևանը գտնվում է Հրազդան գետի ձախ ափին։ Քաղաքը շրջապատված է պտղատու այգիներով և նորատունկ անտառներով։

Քաղաքն ունի շատ գեղեցիկ փողոցներ ու զբոսավայրեր։ Գլխավոր փողոցներն են՝ Ստալինյան պողոտան, Միկոյանի անվան պողոտան, Օրջոնիկիձեի անվան պողոտան, Լենինի անվան պողոտան, Աբովյանի անվան, Ալավերդյանի անվան, Նալբանդյանի անվան փողոցները։ Գլխավոր փողոցներով անցնում են տրամվայները, ավտոբուսներն ու տրոլեյբուսները։ Քաղաքի հարավային մասում գտնվում է երկաթուղային կայարանը։ Գնացքը օրական հարյուրավոր ուղևորներ է փոխադրում դեպի Լենինական, Կիրովական, Թբիլիսի, Բաքու, Մոսկվա և այլ քաղաքներ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 40. — Կարդացե՛ք և պատմեցե՛ք՝ ինչու է աղան միամիտ։ Ո՞ր բառերն ունեն հարցական, շեշտ կամ երկարացման նշան, ինչպե՞ս պետք է կարդալ այդ բառերը։

## ՄԻԱՄԻՏ ՏՂԱՆ

Գրիգորը գնաց անտառ փայտ բերելու։

Բարձրացավ ծառը, ճյուղին նստեց ու սկսեց կտրել այդ ճյուղը։

Ծառի մոտով անցնում էր մի ձիավոր.

— Տես, այ տղա, ընկնելու ես։

Ձիավորը գնաց, իսկ Գրիգորը ճյուղը կտրեց ու վայր ընկավ։

— Վա՛յ,—մտածեց նա,—ձիավորն ամեն ինչ գիտե։ Արի հասնեմ նրան ու հարցնեմ՝ ինչ է քրոջս անունը։

Վազեց՝ հասավ նրան ու ասաց։

— Բեռի՛, ասա՛, ինչ է քրոջս՝ Վարդուհու, անունը։

— Վարդուհի։

Տղան զարմացավ։

— Ասա՛, քանի՞ եղբայր ունեմ ես։

— Իսկ մեծ են եղբայրները։

— Վարոսը շուտով պիտի ամուսնանա, Փանոսը այս ձմեռ դպրոց գնաց, իսկ Պետրոսը դեռ օրորոցումն է։

— Դու երեք եղբայր ունես։

Գրիգորը ավելի զարմացավ։

— Բեռի՛, դու իմաստուն ես, որ ամեն ինչ գիտես։

Ձիավորը ծիծաղեց ու շարունակեց ճանապարհը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 41.— Արտադրեցե՛ք և դրե՛ք պահանջվող կետերը։

## ՈՎ ԱՇԽԱՏԻ, ՆՍ. ԿՈՒՏԻ

Մի խրճիթում ապրում էին մուկիկը, ծիտիկը և հավիկը։

Մի օր քուջուջ անելիս հավիկը մի հատիկ գտավ ու գոչեց.

— Հատիկ եմ գտել, հատիկ եմ գտել։ Ով կտանի աղալու։

— Ես չէ,—ասաց մուկիկը։

— Ես էլ չէ,—ասաց ծիտիկը։

Ինչ աներ հավիկը։ Հատիկը տարավ ջրաղաց, աղաց։

— Ալյուրը ով կտանի տուն,—հարցրեց հավիկը։

— Ես չէ,—ասաց մուկիկը։



— Ես էլ չէ—ասաց ծիտիկը։

Հավիկը ալյուրը շալակեց ու տարավ տուն։

— Ով խմոր կանի,—հարցրեց հավիկը։

— Ես չէ,—ասաց մուկիկը։

— Ես էլ չէ,—ասաց ծիտիկը։

Հավիկը խմորը հունցեց։

— Թոնիրը ով կվառի,—հարցրեց հավիկը։

— Ես չէ,—ասաց մուկիկը։

— Ես էլ չէ,—ասաց ծիտիկը։

Հավիկը թոնիրը վառեց։

— Հացը ով կթխի,—հարցրեց հավիկը։

— Ես չէ,—ասաց մուկիկը։

— Ես էլ չէ,—ասաց ծիտիկը։

Հավիկը հացը թխեց և դրեց սեղանին։

— Հացը ով կուտի,—հարցրեց հավիկը։

— Ես,—գոչեց մուկիկն ու մոտեցավ սեղանին։

— Ես,—գոչեց ծիտիկն ու մոտեցավ սեղանին։

Հավիկը նրանց սեղանից հեռացրեց և ինքը մենակ կերավ հացը։

3336-51

## II. ԽՈՍՔ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 42.— Պատմեցե՛ք հոդվածի բովանդակությունը։

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԲԱՐՁՐ Է ԱՄԵՆԻՑ

Ցուրտ ձմեռ էր։

Սովետական մի զորամաս անտառում նեղել էր թշնամուն։ Ֆաշիստական զորամասն ուզում էր փախչել,



ՀՍՍՌ-ԱԳՈ-ՏՍՊ

բայց ես գնալու ճանապարհը կորցրել էր։ Նոր ձյուն էր եկել և բոլոր հետքերը ծածկել։

Թշնամիները բռնեցին ծերունի կոլտնտեսական Սպիրիդոնովին։

— Գնանք, ցուցց տուր ճանապարհը,—սպառնալով ասացին նրան։

Ծերունին մտածեց։ «Կմեռնեմ, բայց հայրենիքի թշնամիներին չեմ օգնի»։

Սպիրիդոնովը ընկավ առաջ և նրանց տարավ սխալ ճանապարհով։ Ամբողջ գիշերը քայլեցին, ծերունին տանում էր թշնամիներին հակառակ ուղղությամբ։

Լույսը բացվեց։ Բոլորն ուժասպառ էին, թաղվել էին անծանոթ անտառի ձյունների մեջ։ Ուժասպառ էր և Սպիրիդոնովը։

— Ես էլ քայլել չեմ կարող, ես մոռացել եմ ճանապարհը,—ասաց հայրենասեր ծերունին։

Ֆաշիստների կատաղությանը սահման չկար։

Նրանք սպանեցին ծերունի հայրենասերին, բայց իրենք էլ, ընկնելով սովետական զորամասերի կրակի տակ, ոչնչացան։

Փառք հայրենասեր կոլտնտեսական Սպիրիդոնովին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 43.—Պատասխանեցե՛ք հետևյալ հարցերին.

Ինչո՞ւ ենք Սպիրիդոնովին կոչում հայրենասեր։
Ինչպե՞ս կվարվեն սովետական այլ հայրենասերներ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 44. — Այս օրինակով մի պատմություն գրեցե՛ք։



Ամեն մի պատմածը, ասածը կամ գրածը կոչում ենք խոսք։ Խոսքը կազմում ենք նախադասություններով։

## III. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 45. — Կարդացե՛ք հետևյալ նախադասությունները։



Արեգակը դուրս է եկել պսպղալով։
Շողքը երդիից ներս է ընկել շողշողալով։
Ծիտը ծառին կչկչում է ծվծվալով։
Ծուլլ աղայի քունն է տարել խռմփալով։

(Ղ. Աղայան)

Քանի՞ առանձին միտք կա այս օրինակի մեջ։
Ամեն մի տողը քանի՞ միտք է ցույց տալիս։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 46. — Կարդացե՛ք նախադասությունները նկարների կարգով։

Ո՞վ ինչ է անում։



1. Սարգիսը խաղում է։
2. Հասմիկը կարդում է։
3. Վարդանը նկարում է։

Քանի՞ առանձին միտք կա այս օրինակների մեջ։

Բառերով արտահայտած ամեն մի ամփոփ միտք կոչվում է նախադասություն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 47. — Արտագրեցե՛ք տետրերում և ցույց տվեք, թե քանի՞ նախադասությունից է կազմված վարժությունը։

## ԳԱՐՆԱՆ ԳԱԼԸ

Գարուն է։ Ձյունը հալվում է։ Փոքրիկ առվակները դեպի գետն են վազում։ Ձյան տակից դուրս են եկել ծաղիկները։ Մեղուները փեթակներից դուրս են թռչում։ Նրանք ծաղիկների մեջ կեր են որոնում։

Մեր կոլտնտեսությունների եռուն աշխատանքը սկսվում է։

Մի նախադասություն մյուսից բաժանում ենք վերջակետով։ Վերջակետից հետո սկսում ենք մեծատառով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 48. — Արտագրեցե՛ք և մեկ նախադասությունը մյուսից բաժանեցե՛ք վերջակետով։ Վերջակետից հետո սկսեցե՛ք մեծատառով։



Սովետական Միությունը հերոսների երկիր է անվախ սովետական մարտիկները պահպանում են մեր հայրենիքի սահմանները աշակերտները աշխատասեր են մեր դպրոցականները գերազանց են սովորում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 49. — Փակագծերում տրված բառերի օգնությամբ գրեցե՛ք փոքրիկ պատմություն։

(Աշուն, տերևները։ Թռչունները։ Բերք, առատ։ Այգիները, բերքահավաք։ Կոլտնտեսականները, բամբակ, խաղող, շատ մրքդեր)։

Քանի՞ նախադասությունից է կազմված ձեր գրած պատմությունը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 50. — Պատմեցե՛ք նկարի բովանդակությունը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 51. — Կարդացե՛ք հոդվածը, որոշեցե՛ք՝ քանի՞ նախադասությունից է կազմված։ Քանի՞ բառից է կազմված յուրաքանչյուր նախադասությունը։

## ՇԱՐԻԿԸ

Շարիկը հիվանդացավ։

Պետիկը նրա բնի մեջ չոր խոտ փռեց։ Պետիկը նրան տաք կաթ խմեցրեց։

Շարիկն առողջացավ։ Նա ոկսեց Պետիկի եռևից վազվզել։

Մի անգամ Պետիկը գետի ափին ձուկ էր որսում։ Անզգուշությունից նա ընկավ գետը։

Շարիկն իսկույն իրեն նետեց գետը։ Նա առամներով բռնեց Պետիկի շորերից։ Շարիկի օգնությամբ Պետիկն ազատվեց։

Նախադասություն կազմող բառերը կոչվում են նախադասության անդամներ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 52. — Արտագրեցե՛ք նախադասությունները նկարների կարգով։





Մինասը գրում է։
Սահակը նկարում է։
Նեկտարը նվագում է։
Հակոբն ու Նունիկը կարդում են։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 53.—Պատասխանեցե՛ք հետևյալ հարցերին.

Ո՞վ է նկարում . . . . . .
Ովքե՞ր են կարդում . . . . .
Ո՞վ է գրում . . . . . .
Ո՞վ է նվագում . . . . . .

Նախադասության այն անդամը, որը ցույց է տալիս մի բան անող կամ լինող առարկան, կոչվում է ենթակա։

Ենթական պատասխանում է ո՞վ (ովքե՞ր) կամ ի՞նչ (ինչե՞ր) հարցերին։

Օրինակ՝

Կանաչ ու կարմիր կապեց ծիածանը (ի՞նչը)։
Զրի կաթիլներն (ինչե՞րը) ալ գոհար դարձան։
Այս նախադասությունների մեջ ծիածանը և կաթիլները բառերը ենթականեր են։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 54. —Անգիր սովորեցեք հետևյալ ոտանավորը. ցույց տվեք յուրաքանչյուր նախադասության ենթական։

Կակաչ փռվեց սաբի լանջին։
Մորին կարմրեց թփի միջին։
Դաշտը թավիշ զգեստ հագավ։
Կանգնեց քարին, երգեց կաքավ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 55. — Նկարների կարգով արտագրեցեք նախադասությունները։

Կոմբայնը հնձում է։
Տրակտորը վարում է։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 56.—Պատասխանեցե՛ք հետևյալ հարցերին

Տրակտորն ի՞նչ է անում։
Կոմբայնն ի՞նչ է անում։

Նախադասության այն անդամը, որը ցույց է տալիս, թե ենթական ի՞նչ է անում, ի՞նչ է լինում կամ ի՞նչ է, կոչվում է ստորոգյալ։

Օրինակ՝ Նախշուն ներկվում են դաշտ, անտառ, այգի։

Հասուն ժպտում են ծառերը մրգի։

Այս նախադասությունների մեջ ներկվում են, ժպտում են բառերը ստորոգյալներ են։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 57. — Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք միայն ստորոգյալները։

Օրը տաք է։ Ձյունը հալվեց արևից։
Ցչքչալով ջուր է հոսում լեռներից։
Սար ու ձորեր զարդարվում են կանաչով։
Դաշտը ծածկվեց ոչխարների հոտերով։

Ստորոգյալը կարող է բաղկացած լինել մեկ կամ մի քանի բառերից և պատասխանել ի՞նչ է, ի՞նչ անում, ի՞նչ արավ, ի՞նչ է լինում, ի՞նչ եղավ և նման հարցերին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 58. — Արտագրեցե՛ք հետևյալ վարժությունը. ենթակայի տակ մեկ, իսկ ստորոգյալի տակ երկու գիծ քաշեցե՛ք, ստորոգյալների վերևը գրեցեք հարցերը։

Ահա եկան աշնանային թուխպ օրեր։
Մաղմղում են մանրահատիկ կաթիլներ։
Ծառերն իրենց տերևներից մերկացան։
Կռունկները շարան-շարան անց կացան։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 59. — Կետերի տեղը դրե՛ք համապատասխան ենթականեր։

. . . . . հնչեց։ . . . . . սկսվեց։
. . . . . կարդացին։ . . . . . վերջացավ։
. . . . . հանգստանում է։ . . . . . խաղում են։

(զանգը, դասն, աշակերտները, դասը, ուսուցիչը, երեխաները)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 60. — Կետերի տեղը դրե՛ք համապատասխան ստորոգյալներ։

Դասը . . . . ։ Ուսուցիչը . . . . ։
Աշակերտները ձեռները . . . . ։
Հասմիկը . . . . ։
Հասմիկը գերազանց գնահատական . . . . ։
Դասը . . . . ։

(սկսվում է, հարցնում է, բարձրացնում են, պատասխանում է, ստացավ, հետաքրքիր է)։

Երբ սառորդյալը բաղկացած է եմ, ես, է, ենք, եք, են, էի, էիր, էր, էինք, էիք, էին օժանդակ բառերից և մի այլ բառից, ապա այդ օժանդակ բառերը դրվում են կամ այդ բառից առաջ և կամ հետո։

Օրինակ՝ Անուշ հովերն են փչում։

Սառորդյալը կլինի՝ փչում են։

Եթե սառորդյալները մի քանիսն են, ապա օժանդակ բառը կրկնվելու դեպքում կարող է բաց թողնվել։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 61. — Արտագրեցե՛ք սառորդյալները՝ փոխելով օժանդակ բառի տեղը կամ լրացնելով, եթե բաց է թողնված։

## ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

Անուշ հովերն են փչում,
Ոսկի հասկեր են ծփում,
Մանր ուլունք շաղ տալով՝
Բարակ առուն կարկաչում։

Առվի կանաչ ափերին
Ուլիկները են արածում,
Ծաղիկները թփերին
Անուշ բուրմունք տարածում։

Արշալույսը ոսկեզօծ
Ծագեց հեռվից շողալով,
Խոփը մտավ հողի ծոց,
Ակոս շարեց սողալով։

(Խնկո-Ապեր)



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 62. — Կարդացե՛ք, արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք միայն ենթակաները ու սառորդյալները։

## Զմեռ

Զմեռը եկավ։ Զրանը ծանկեց դաշտը ու այգի, ասր ու ջոր։

Ընդարանի կենդանիները թաքնվեցին գրաֆ գոմերում։ Վայրի կենդանիները գրաֆ մուղրակ հագան։

Նոր գնդանոցները շոռան համար ունեն զատ ագրար, ջամբար, գարանոցներով խաղող, գրանց ու խնձոր և զատ մթերքներ։

Երեխաները ջրանից ու ցրտից չեն վախենում։ Ներանք սահում են։ Ներանք սղոում են։ Ներանք ջնագնդի են խաղում։

Երեխաները պատրաստում են ջնե մարդ։

## IV. ՀԱՄԱՌՈՏ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 63. — Կարդացե՛ք և ցույց տվեք, թե քանի բառից է կազմված ամեն մի նախադասություն։*

### ԱՌԱՎՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

*Գիշերն անցավ։ Լույսը բացվեց։ Արևը ծագեց։ Քաղաքն արթնացավ։ Շչակը հնչեց։ Բանվորները հավաքվեցին։ Աշխատանքն սկսվեց։*

*
* *

*Զյունը հալվեց։*
*Օրը տաքացավ։*
*Ծառը ծաղկեց։*
*Ծիծառը եկավ։*

*Միայն* ենթակայով և ստորոգյալով *կազմված նախադասությունը կոչվում է* համառոտ նախադասություն:

Համառոտ նախադասության գծագիր

Զյունը հալվեց

*ենթակա* — *ստորոգյալ*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 64.—Նկարների համապատասխան կազմեցե՛ք* նախադասություններ, *որ ունենան միայն* ենթակա և ստորոգյալ:





*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 65. — Լրացրե՛ք բաց թողնված բառերը։ Նախադասությունների վերջում վերջակետ դրե՛ք։*

ԳԱՐՈՒՆ

Զյուն . . . . . Օրերը . . . . . Ծառերը . . . . . եկավ . . . . . եռաց . . . . .

(հալվեց, տաքացան, ծաղկեցին, ծիծեռնակը, աշխատանքը)։

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 66. — Ուշադիր կարդացե՛ք, պատմեցե՛ք բովանդակությունը։ Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք համառոտ նախադասությունները։*

### ԱՇՆԱՆ ՍԿԶԲԻՆ

*Աշնան սկզբին մի բարակ քամի*
*Սարիցը եկավ, դաշտերը իջավ,*
*Ասաց, փսփսաց մի բան ամենքին*
*Ու անցավ, գնաց, անտառը մտավ։*

*Խոտը չորացավ։ Հողը ցամաքեց։*
*Այստեղ ու այնտեղ բացվեցին ճեղքեր։*
*Անտառը դողաց, ու վախից խշշուն*
*Դեղին դուն հագան կանաչ տերևներ։*

(Հ. Թումանյան)

## V. ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 67. — Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք նախադասության այն անդամները, որոնք* ենթակա *կամ* ստորոգյալ *չեն։*

Փչում են անուշ հովերը։
Ծվում են ոսկե հասկերը։

Բացի ենթակայից և ստորոգյալից, նախադասության մյուս բոլոր անդամները կոչվում են լրացումներ:

Լրացումները պարզաբանում են նախադասության միտքը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 68. — Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք լրացումները։

Մի անգամ արշալույսին Շչորսը հեռապնդում էր սպիտակ-գվարդիականներին։ Նրանք փախչում էին դեպի գետի կողմը։

Շուտով Շչորսն իր պարտիզանների հետ շրջապատեց նրանց։ Բոլոր սպիտակ-գվարդիականները բռնվեցին։

Նախադասության ենթական ու ստորոգյալը կոչվում են գլխավոր անդամներ:

Նախադասության լրացումները կոչվում են երկրորդական անդամներ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 69. — Արտագրեցե՛ք և գլխավոր անդամները ընդգծեցե՛ք մեկ գծով, իսկ երկրորդական անդամները՝ երկու գծով։

Ահմեդն ապրում է Թուրքմենիստանում։ Նա մշակում է բամբակի դաշտերը։

Անդրեյն ապրում է Մոսկվայում։ Նա աշխատում է գործարանում։



Սուրիկն ապրում է Երևանում։ Նա ամեն օր դասերն է պատրաստում։

Լրացում ունեցող նախադասությունը կոչվում է ընդարձակ նախադասություն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 70. — Արտագրեցե՛ք ընդարձակ նախադասությունները և յուրաքանչյուր անդամի վերևում գրեցե՛ք նրան տրվող հարցը։

## ԲԱՄԲԱԿ

Հնում մարդիկ հագնում էին հասարակ ու կոպիտ կտորից պատրաստված շորեր։ Կանայք բուրդը գզում էին, ճախարակով մանում, թել դարձնում։ Հետո էլ այդ թելից տանը կտոր էին գործում։

Այժմ գործարաններում պատրաստում են ամեն տեսակի նուրբ և գեղեցիկ կտորներ։ Կտորների բազմաթիվ տեսակներ պատրաստվում են բամբակից։

Բամբակը բուսնում է դաշտում։ Նա սիրում է արև, լույս, տաքություն և փխրուն հող։

Բամբակացան կոլխոզները մեր հայրենիքի գործարաններին են հանձնում բամբակի առատ բերքը։

Օրինակ՝

| | | |
|---|---|---|
| ի՞նչը | ի՞նչ է անում՝ | որտե՞ղ |
| Բամբակը | բուսնում է | դաշտում։ |

Նախադասության այն երկրորդական անդամը, որը լրացնում և պարզաբանում է ենթական, կոչվում է ենթակայի լրացում:

Օրինակ՝

*Գերազանցիկ Ստեփանը պարգևատրվեց։*

Գերազանցիկ *բառը* Ստեփանը *ենթակայի լրացումն է։*

Ենթակայի լրացում ունեցող ընդարձակ նախադասության գծագիրը.




ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 71.— *Գծագրերով արտահայտեցե՛ք* ենթակայի լրացում *ունեցող հետևյալ* նախադասությունները.

*Փչում են անուշ հովերը։*
*Ծփում են ոսկե հասկերը։*

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 72.—*Արտագրեցե՛ք հետևյալ նախադասությունները և ընդգծեցե՛ք* այն լրացումները, *որոնք* ենթակային չեն վերաբերում. *յուրաքանչյուրի վերևը գրեցե՛ք նրան տրվող հարցը։*

*Դպրոցը կազմակերպեց հանդես։*
*Հայկն արտասանեց ոտանավոր։*
*Մանյան կազմակերպեց կլոր պար։*
*Համիկը լավ պարեց։*

*Նախադասության այն երկրորդական* անդամը, որը լրացնում *է ստորոգյալը, կոչվում է* ստորոգյալի լրացում:



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 73. — *Կարդացե՛ք և պատմեցե՛ք, արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք* ստորոգյալի լրացումները:



## ՄՐՋՅՈՒՆՆ ՈՒ ԱՂԱՎՆԻՆ
(Առակ)

*Մրջյունը մոտեցավ առվակին ջուր խմելու։ Ալիքը խփեց ափին։ Մրջյունն ընկավ ջրի մեջ։ Աղավնին այդ տեսավ և առվակի մեջ մի ճյուղ գցեց։ Մրջյունը բարձրացավ ճյուղի վրա և ազատվեց։*

*Մի քանի օրից հետո մրջյունը տեսավ, որ որսորդն ուզում է սպանել աղավնուն։ Մրջյունը որսորդի ձեռքը կծեց։ Որսորդի զնդակը վրիպեց։ Աղավնին ազատվեց։*

(Լ. Տոլստոյ)

Ստորոգյալի լրացում ունեցող ընդարձակ նախադասության գծագիրը:



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 74. — Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք ենթակայի լրացումները մեկ, իսկ ստորոգյալի լրացումները երկու գծով. յուրաքանչյուրի վերևը գրեցե՛ք նրան տրվող հարցը։

Սովետական բազմազգ ժողովուրդը սիրում է իր հզոր հայրենիքը։ Հզոր Սովետական Բանակը պաշտպանում է խաղաղությունը պատերազմի հրձիգներից։ Սովետական երկրում զարգանում է առաջավոր գիտությունը։ Բոլոր ուսուցիչները սիրում են Ջանասեր աշակերտին։ Դպրոցի բակի ծառերը գարնանը ծածկվում են գույնզգույն ծաղիկներով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 75. — Գծագրերով տրված նախադասությունները գրեցե՛ք տետրերում. ցույց տվեք ենթակայի և ստորոգյալի լրացումները առանձին-առանձին։




ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 76.—Այսպիսի գծագրեր գծեցե՛ք ձեր տետրերում և լրացրե՛ք համապատասխան նախադասություններով։






ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 77.— Գծագրերով արտահայտեցեք հետևյալ նախադասությունները.

Օդանավը արագ թռչում է։ Մեր օդաչուներն անվախ են։ Մեր երկրի ժողովուրդը պարծենում է իր օդաչուներով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 78. — Արտագրեցե՛ք՝ հարցերի փոխարեն դնելով տրված լրացումները.

Երեխան որտեղ (ինչ)։
Երեխաները գրեցին (ինչ)։
Կոլտնտեսները կալսում է (ինչով)։
(ձուկ, պատմվածք, կալսիչ մեքենա)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 79. — Համառոտ նախադասությունները դարձրե՛ք ընդարձակ նախադասություններ։

Ծփում են հասկերը։ Հնձում է կոմբայնը։ Հրճվում են կոլտնտեսականները։ Լցվում են պարկերը։ Ցորենն առատ է։ Կոլտնտեսականներն ունևոր են։ Կյանքն ուրախ է։

(մեղմ, ոսկե, անդադար, առատ բերքով, ոսկի ցորենով, մեր, սովետական աշխարհում)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 80. — Որոշեցե՛ք հետևյալ նախադասությունների ենթական, ստորոգյալը և լրացումները:

Գարունը եկավ: Ջմռան քնից արթնացավ բնությունը: Ծաղկեցին ծառերը: Հեռու երկրներից երամներով եկան կռունկները:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 81. — Հետևյալ համառոտ նախադասությունները վերածեցե՛ք բնդարձակ նախադասությունների՝ ավելացնելով փակագծերում տրված հարցերի համապատասխան լրացումները:

Աշակերտը (որտեղ, ինչով, ինչ) գրեց:
Հակոբը (երբ, որտեղ, ում հետ) դիտեց «Լենինը Հոկտեմբերին» կինոնկարը:
Երեխաները (ինչով, ուր) են գնում:
Կոլտնտեսությունը (երբ, ինչով, ինչ) է հնձում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 82. — Վերլուծեցե՛ք այս նախադասությունը ըստ տրված հարցերի:

Նելլին կարդում է Պուշկինի «Ոսկե ձկնիկ» հեքիաթը:
1) Նելլին ինչ է անում: 2) Ո՞վ է կարդում: 3) Ի՞նչն է կարդում: 4) Ո՞ւմ հեքիաթը:

Լրացումներ կարող են լինել մեկ կամ մի քանի բառ:

Լրացումները պատասխանում են որևէ հարցի:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 83. — Կարդացե՛ք պատմվածքը. գտե՛ք նախադասության գլխավորը և երկրորդական անդամները և նրանց տրվող հարցերը:



## ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ

Արևի ոսկե ճառագայթները հեղեղել էին ասր ու ձոր, դաշտ ու անառատ:

Գյուղն ու քաղաքը առնական տեսք էին ընդունել: Բոլոր տների վրա, հրապարակներում ծածանվում էին կարմիր դրոշակները:

Ջանաղան փողոցներից լսվում էր քաղցը և ուրախ նվագ:

Երթն անցնում էր մեծ հրապարակով:

Բոլորից առաջ գնում էին մեր պանծալի մարտիկները: Նրանցից հետո գնում էին գործարանների բանվորները, ծառայողները, ֆիզկուլտուրնիկները, պիոներները: Ստախանովական Հասանը բարձր բռնած տանում էր կարմիր դրոշակը: Պիոներները մեծ հրճվանքով տանում էին սիրելի Ստալինի նկարը:

Օդում ճախրում էին շատ ու շատ օդանավեր:

— Կեցցե՛ Մայիսի 1-ը: Կեցցե՛ մեղ երջանիկ կյանք պարգևող Մեծ Ստալինը,—գոչում էին բոլորը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 84. —Նախադասությունների մեջ ավելացրե՛ք լրացումներ տրված հարցերի համապատասխան և ապա ամբողջը կարդացե՛ք:

## ՄԱՆՈՒՇԱԿ

(Ինչպիսի՞) գլխով, (ինչպիսի՞) ոտով
Ես ծաղիկ եմ (ինչպիսի՞) հոտով:
Թեև տունկս փոքրիկ է, ցած,
Արոտներում միշտ թաք կացած,
Բայց իմ (ի՞նչը), իբրև մի զարդ,
Տեսնում է միշտ ամեն մի մարդ:
Ես եմ (ինչպիսի՞) գարնան գուշակ,
Իմ անունն է (ի՞նչ):

(Կապույտ, կանաչ, անուշ,
փունջը, սիրուն, մանուշակ):

Եթե նախադասության որևէ անդամ բաց է թողնվում, տեղը դրվում է բութ (՝)։

Օրինակ՝ Մարտը տալիս է ձնծաղիկ,
Ապրիլը՝ կապույտ մանուշակ։

Ապրիլ բառի վրա դրված է բութ, որովհետև նրանից հետո բաց է թողնված տալիս է սատրոդյալը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 85. — Արտագրեցե՛ք այն նախադասությունները, որոնց մեջ բութը փոխարինում է որևէ անդամի, լրացրե՛ք բաց թողնվածը։

Մարտը տալիս է ձնծաղիկ,
Ապրիլը՝ կապույտ մանուշակ։
Մայիսին բացվում է վարդը,
Սոխակը երգում անուշակ։

Հունիսը մեզ խոտ է տալիս,
Իսկ հուլիսը՝ առատ ցորեն,
Օգոստոսը՝ տանձ ու խնձոր
Եվ ուրիշ շատ հասուն մրգեր։

Սեպտեմբերը մեզ տալիս է
Խաղողի բոլոր տեսակը,
Հոկտեմբերը՝ կարմիր գինին,
Նոյեմբերը՝ բողկն ու տակը։

(Ղ. Աղայան)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 86. — Ուշադրություն դարձրեք, թե ինչպե՛ս են գրվում ձնծաղիկ, ապրիլ, կապույտ, մանուշակ, վարդ, երգում է, օգոստոս, մրգեր, սեպտեմբեր, հոկտեմբեր, բողկ, նոյեմբեր։ Արտագրեցե՛ք ձեր տետրերում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 87. — Գրեցե՛ք շարադրություն՝ «Տարվա չորս եղանակները»։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 88.—Գտե՛ք նախադասությունների գլխավոր և երկրորդական անդամները և ամեն մեկին տրվող հարցը։

## ԳԱՐՈՒՆ

Գարունը բերում է պայծառ արև ու տաք օրեր։ Գարունը ծածկում է դաշտերը դալար խոտերով։ Նա զարդարում է անտառը կանաչ տերևներով։ Գարունը բերում է ծաղիկներ ու թիթեռներ։ Գարունը կանչում է թռչուններին հեռու երկրներից, և նրանք աշխարհը լցնում են երգերով։

# VI. ՀԱՐՑԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 89. — Կարդացե՛ք և արտագրեցե՛ք միայն հարց արտահայտող նախադասությունները։

## 1

## ԾԱՂԻԿՆԵՐ

— Խարտյա՛շ տղա,
Ի՞նչ ես քաղում,
Հետն էլ երգում, ուրախ խաղում։
— Ծաղիկներ եմ քաղում, խաղում...
— Ի՞նչ պիտ անես ծաղիկներն այդ,
Սիրուն տղա, ատրերով վարդ։
— Քաղած կարմիր ծաղիկները
Պիտի լինեն իմ նվերը։
— Ո՞ւմ պիտի տաս նվերը քո։

— Սաալինին, մեր հոբը մեծ,
Որ մեզ նոր օր, նոր կյանք տվեց։

(Վ. Արամունի)

## 11

## ՀԱՐՑԱՍԵՐ ՄԱՆՎԵԼԸ

— Հայրիկ, ինչից են պատրաստում կաթսաները,— հարցրեց Մանվելը։

— Պղնձից,— պատասխանեց հայրը։

— Ուրիշ ի՞նչ են պատրաստում պղնձից,—նորից հարցրեց նա։

— Մարդիկ պղնձից պատրաստում են մեքենայի մասեր, էլեկտրական լարեր և ուրիշ շատ իրեր։

— Իսկ որտեղի՞ց է պղինձը,—շարունակեց Մանվելը։

— Պղինձը գտնվում է հողի տակ, նա կարմիր գույն ունի, բանվորներն են հանում,—ասաց հայրը։

— Բոլոր հողերում պղինձ կա,—նորից հարցրեց Մանվելը։

— Ո՛չ, բոլոր հողերում չկա։ Հայաստանում պղինձ կա Ղափանի ու Ալավերդու հողերում։

Հարց արտահայտող նախադասությունը կոչվում է հարցական նախադասություն։

Հարցական նախադասության մեջ հարց արտահայտող բառի վրա հարցական նշան (՞) է դրվում։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 90. —Արտագրեցե՛ք հարցական նախադասությունները և դրե՛ք նրանց հարցական նշանները։

## 1

Ով տվեց մեզ հզոր ու մեծ
Ծաղկածիծաղ հայրենիք,
Ով մեզ դպրոց, գիրք պարգևեց
Մեր ջինջ լեզվով մայրենի։

Ով մեզ բերեց պայծառ օրեր,
Ասաց՝ ապրեք միշտ ազատ։
— Առաջնորդը, արևը մեր՝
Սաալինը հարազատ։

Այն ով վառեց մեր սրտերում
Հազար, հազար ցանկություն,
Ով տվեց մեզ այսքան ուրախ
Ու երջանիկ մանկություն։

Ով է ժպտում հոր պես բարի,
Սիրով օգնում ամենքին։
— Առաջնորդը ողջ աշխարհի՝
Սաալինը թանկագին։

(Ռ. Ղարիբյան)

## 11

1. Ինչպես է կոչվում Սովետական Միության մայրաքաղաքը։
2. Զանգուն որ լճից է սկիզբ առնում։
3. «Շունն ու կատուն» ով է գրել։
4. Ով է գրել «Ոսկե ձկնիկ» հեքիաթը։

(Մոսկվա, Սևան, Հ. Թումանյան, Պուշկին)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 91. — Տրված պատասխանների համար գրեցե՛ք հարցական նախադասություններ։

Հարց . . . . .
Պատասխան — Պուշկինը ծնվել է 1799 թվին։
Հարց . . . . .
Պատասխան — «Տորք Անգեղը» գրել է Դազարոս Աղայանը։
Հարց . . . . .
Պատասխան — Շոգեմեքենայի գյուտը կատարել է Պոլզունովը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 92. — Կարդացե՛ք հոդվածը, արտագրեցե՛ք միայն հարցական նախադասությունները։

## ՋՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Ջուրը, ում ասես, որ հարկավոր չէ։ Նա հարկավոր է բույսերին, կենդանիներին, թռչուններին և մարդկանց։

Ծովերի ջուրն աղի է և դառն։ Այդ վնաս չունի, որովհետև ամենքը ծովի մոտ չեն բնակվում։ Սակայն ինչպե՞ս մաքրենք ջուրը։ Ինչպե՞ս տանենք նրան ծովերից հազարավոր մղոն հեռու։ Ինչպե՞ս բարձրացնենք նրան սարերի գլուխը։

Այդ գործը կատարում է աշխատասեր արևը։ Իր տաք ճառագայթներով արևը ջուրը թեթև գոլորշի է դարձնում, գոլորշին ջրի աղային մասերը թողնում է ծովերում, իսկ ինքը վերև է բարձրանում և թանձրանալով, արծաթափայլ ամպերի ձևով երևում է կապույտ երկնակամարի վրա։

Սակայն ամպերը չեն կանգնում, մնում հենց ծովերի վրա։ Այստեղ քամին սկսում է իր գործը. անդին ամպերը թեթև փետուրի նման քշում է դեպի աշխարհի



բոլոր կողմերը։ Ամպի մեջ այնքան ջուր կա, որ եթե նա միանգամից ցած թափվեր, կծածկեր քաղաքները, գյուղերը, մարդկանց ու կենդանիներին։ Բայց այդպես չի լինում. ամպերից կաթկաթում են անձրևի մանր կաթիլներ, ինչպես ալյուրը մաղի միջից, կամ սառչում ու թափվում են որպես ձյուն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 93. — Պատմեցե՛ք՝ որտեղից են անձրևը, ձյունը, կարկուտը, ցողը, հղյամը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 94. — Գրեցե՛ք շարադրություն՝ «Ջրի ճանապարհորդությունը»։

## VII. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 95. — Արտագրեցե՛ք հրաման արտահայտող նախադասությունները։

Դու կաց, հորեղբայր։ Դու դարդ մի անիր։
Գնա՛, քո օգուտ դու հանգիստ քնիր։
(Հ. Թ. «Սասունցի Դավիթ»)

Քաշիր, եղը, ուսիդ մատաղ,
Քաշիր, քաշենք, վար անենք։
(Հ. Թումանյան)

Հրաման, պահանջ, խնդիր կամ կարգադրություն ցույց տվող նախադասությունը կոչվում է հրամայական նախադասություն։ Հրաման ցույց տվող բառերի վրա շեշտ է դրվում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 96. — Արտագրեցե՛ք հրամայական նախադասությունները և դրե՛ք բաց թողնված շեշտերը։

Դպրոցականներ, տիրապետեցեք գիտության հիմունքներին։ Ամրացրեք կարգապահությունը դպրոցներում։ Օգնեցեք ձեր ընկերներին։ Սիրեցեք ձեր Սովետական Հայրենիքը։ Պատրաստվեցեք կոմունիզմի ակտիվ կառուցողներ դառնալու։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 97. — Ինքներդ կազմեցե՛ք հրամայական նախադասություններ և գրեցե՛ք տետրերում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 98. — Կարդացե՛ք և արտադրեցե՛ք միայն հրամայական նախադասությունները։

## ՎԵՐ ԿԱՑ

Վեր կաց, մանուկ, խորունկ քնից,
Արևն արդեն ծագել է,
Վեր կաց փափուկ քո անկողնից,
Հավը վաղուց խոսել է։

Վեր կաց, նայիր պատուհանից
Դեպի հեռու դաշտերը,
Տես, թե ինչպես մեզմ զեփյուռից
Սվսվում են արտերը։

Դե, շուտ ցատկիր, ելիր կայտառ,
Մի ծուլանա տեղիդ մեջ.
Վազիր դպրոց, դրքերդ առ
Ու բախտ դտիր կյանքիդ մեջ։

## VIII. ԲԱՑԱԳԱՆՉԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 99. — Արտագրեցե՛ք բացականչություն ցույց տվող նախադասությունները։



Կեցցե՛ն մեր հերոս օդաչուները։
Երանի՜ ես օդաչու լինեի։

Սովորե՛նք, երեխանե՛ր, սովորե՛նք գերազանց, որպեսզի կարողանանք մեծ օգուտ տալ մեր հայրենիքին։
Բարձր պահե՛նք Լենինի–Ստալինի անպարտելի դրո՛շը։

> Կոչ, ցանկություն, բացականչություն արտահայտող նախադասությունը կոչվում է բացականչական նախադասություն։
>
> Բացականչական նախադասության մեջ կոչ, ցանկություն, պահանջ արտահայտող բառերի վրա բացականչական նշան (՛) կամ շեշտ (՛) է դրվում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 100. — Արտագրեցե՛ք և դրե՛ք բաց թողնված նշանները։

Կեցցե՛ Մեծ Հոկտեմբերը։

Բոցավառ ողջույն մեր փառապանծ Սովետական Բանակին։

Առաջ, դեպի նորանոր հաղթանակներ։
Որքան լավ է ապրել Սովետական Հայրենիքում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 101. — Արտագրեցե՛ք և դրե՛ք բացականչական նշանները և շեշտերը։



Դամիրն էլ անա սարի գագաթին
կանգնած գոռում է վիշապի նման.
—Ով քնած եք արթուն կացեք,
Ով արթուն եք՝ ելեք, կեցեք,
Ով կեցել եք՝ գենք կապեցեք,
Գենք եք կապել՝ ձի թամբեցեք,
Ձի եք թամբել՝ ելեք, հեծեք,
Հեծած չասեք, թե մենք քնած՝
Դամիր՝ գող-գող եկավ, գնաց...

(Հ. Թումանյան.
«Սասունցի Դավիթ»)



## IX. ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

*Պատմելու ձևով ասված կամ գրված նախադասությունը կոչվում է* պատմողական նախադասություն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 102. — Արտագրեցե՛ք պատմողական նախադասությունները:

### ԺԱՄԻ ՁՈՐՍԻՆ

Մի հարուստ անգլիացի ավտոմոբիլով գնում էր կայարան: Նա գնացքով պետք է մեկներ:

Հանկարծ մեքենան կանգ առավ:

Շոֆերը ավտոմոբիլից դուրս եկավ, գլխարկը վերցրեց ու լուռ կանգնեց:

— Մեքենան փչացել է,—հարցրեց հարուստը:— Շտապիր, ժամի չորսին գնացքը մեկնում է. հինգ րոպե է մնում:

Շոֆերը նայեց ժամացույցին և ասաց.

—Հիմա Մոսկվայում թաղում են Լենինին՝ ամբողջ աշխարհի բանվորների առաջնորդին: Ամեն տեղ կյանքը հինգ րոպեով կանգ է առնում:

— Վաղվանից դուք էլ իմ շոֆերը չեք,—կատաղած հայտարարեց հարուստը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 102ա. — Կազմեցե՛ք հինգ պատմողական նախադասություններ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 103. — Նկարների համաձայն գրեցե՛ք փոքրիկ պատմվածք։



Քանի՞ նախադասությունից է կազմված ձեր գրած պատմվածքը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 104. — Շարունակեցե՛ք ... Մի անգամ ամառը։

## X. ՀԱՄԱԴԱՍ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 105. — Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք միևնույն հարցին պատասխանող լրացումները։

Սովետական Միությունն աշխարհում ամենահզոր, ամենահրապուրիչ, ամենաազատ երկիրն է։ ՍՍՌՄ-ն հարուստ է նավթով, քարածուխով, երկաթով, պղնձով, ոսկով, արծաթով և այլ թանկագին հանքերով։



Միևնույն հարցին պատասխանող մի քանի լրացումներ կոչվում են համադաս լրացումներ։

Համադաս լրացումներն իրարից բաժանվում են ստորակետներով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 106. — Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք համադաս լրացումները։

Հե՛յ, կանգնչ ախպեր,
Հե՛յ, ճանգնչ ախպեր,
Արի՛, քեզ հետ բե՛ր արևի շողեր,
Բե՛ր անուշահոտ ծիլ, ծաղիկ ու խոտ,
Կարկաչուն վտակ, երկինք կապուտակ,
Ծատուտիկ հավքեր, գընդան երգեր,
Գառների մայուն, խաղ, ուրախություն։

(Հ. Թումանյան)

Եթե համադաս լրացումները եվ կամ ու բառով են միանում, դրանց միջև ստորակետ չի դրվում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 107. — Արտագրեցե՛ք և գրե՛ք բաց թողնված ստորակետները, բացատրեցե՛ք՝ ինչու է դրվում ամեն մի ստորակետը։

Հուսիկը հինգ է ստացել ռուսաց լեզվից հայոց լեզվից թվաբանությունից ֆիզիկայից ընագիտությունից և աշխարհագրությունից։

## ԱՇՈՒՆ Է, ՉԱՆ

Լիութիւնը ողողել է դաշտ ու այգի մառան ու առուն,
Համայնական սուրբ վաստակ է, առատ բերքի
բաշխում է, Չանն.
Ամենուրեք եռանդ ու երգ ծափ ու ծիծաղ
խնդութիւն։
Առատ բերքով, ազատ երգով սովետական աշուն է,
Չանն։

## XI. ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ԵՆԹԱԿԱ ԵՎ ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՍՏՈՐՈԳՅԱԼ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*ա) ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ԵՆԹԱԿԱ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 108.* — Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք ենթակաները։

Ու երան՝ թափած ոսկին թողեցին,
Հայոց աշխարհից փախան, գնացին
Բագին, Կողբադին, Սյուդին, Զարխադին։
(Հ. Թ.)

### ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՎԵՃԸ

Ծիտ, ագավնի ու բազե,
Սիրամարգ ու լոր
Մի լայն շրջան են կազմել,
Վիճում են մի օր։
(Մ. Կորյուն)



Նախադասության մեջ կարող են լինել մեկից ավելի ենթականեր։ Մեկից ավելի ենթակա ունեցող նախադասության մեջ ենթակաները իրարից բաժանում են ստորակետով։

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 109.* — Արտագրեցե՛ք մեկից ավելի ենթականեր ունեցող նախադասությունը և դրե՛ք բաց թողնված ստորակետները։

Սովետական Միությունն ունի բազմաթիվ դեսեր։ Օբը Ենիսեյը Լենան Վոլգան Դնեպրը և Դոնը մեր երկրի ամենանշանավոր գետերն են։

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 110.* — Գծագրում տրված մեկից ավելի ենթակա ունեցող նախադասությունն արտագրեցե՛ք սովորական ձևով։



Եվ կամ ու բառով միացող ենթակաները ստորակետով չեն բաժանվում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 111. — Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք ենթակաները, դրե՛ք բաց թողնված ստորակետները։

Բայկալը Բալխաշը Լադոգան Սովետական Միության նշանավոր լճերն են։
Ուրալում կա երկաթ քարածուխ ոսկի արծաթ և պղինձ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 112. — Կազմեցե՛ք 3 նախադասություն, որոնցից յուրաքանչյուրն ունենա մի քանի ենթակա։

### բ) ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՍՏՈՐՈԴՅԱԼ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 113. — Ցույց տվեք ստորոգյալները, ընդգծեցե՛ք մեկից ավելի ստորոգյալ ունեցող նախադասությունները։

Արտասովոր աշխուժություն էր տիրում կոլտնտեսությունում։ Կոլտնտեսականները կատակում էին, ուրախանում էին ու շնորհավորում էին միմյանց։ Նրանք պատմում էին, թե ինչպես կոմբայնը հնձում է, կալսում է և տեսակավորում է հացահատիկը։

Նախադասության մեջ կարող են լինել մեկից ավելի ստորոգյալներ։
Մեկից ավելի ստորոգյալներն իրարից բաժանվում են ստորակետերով։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 114. — Կազմեցե՛ք մեկից ավելի ստորոգյալ ունեցող երկու նախադասություն հետևյալ բառերի օգնությամբ։

Աշակերտը, սովորում է, նկարում է, գրում էր, արտասանում է, խաղում էր, պիոները։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 115. — Անգի՛ր սովորեցեք ոտանավորը. արտագրեցե՛ք մեկից ավելի ստորոգյալ ունեցող նախադասությունները։

## ՍՐԱՆՈՐԴԻՆ

Մեծ առաջնորդ, թանկագին հայր,
Դու մեր կյանքի վառ արև,
Որդիներից քո խանդավառ
Հազար ողջույն ու բարև։

Դու մեզ սիրում, գուրգուրում ես
Անհուն սիրով հայրական,
Անշեղորեն մեզ տանում ես
Դեպի պայծառ ապագան։

Երջանիկ ենք, որ ապրում ենք
Քո արևի լույսի տակ,
Ամբողջ սրտով ցանկանում ենք
Քեզ վառ օրեր, երկար կյանք։

(Վ. Վարդանյան)

Մեկից ավելի ստորոգյալ ունեցող նախադասության գծագիրը։




ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 116. — Հետևյալ նախադասությունների համար գծեցե՛ք գծագրեր.

Հիդրոպլանը թռչում է, լողում է, սահում է։
Հակոբը կարդում է, գրում է, նկարում է։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 117. — Արտագրեցե՛ք և դրե՛ք բաց թողնված ստորակետները. բացատրեցե՛ք, թե ինչու եք դնում։

## ԱՐԵՎԸ

### I

Վաղ առավոտյան տալիս է բարև
Կեսօրին կանգնում մեր գլխի վերև
Իրիկնապահին մեզնից հեռանում։



Բարձր սարերի եռանն է մտնում
Բերում է իր հետ ցերեկ ու գիշեր
Նա ամենալավ ժամացույցն է մեր։




### II

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 118. — Արտագրեցե՛ք և դրե՛ք բաց թողնված ստորակետները։

Սոնիկն այժմ սավառնորդ է
Նավախմբի պետ է նա
Օդում ճարպիկ մի լողորդ է
Պողպատաթև ու անահ։
Նա թռչում է շա՜տ, շա՜տ բարձր
Շուռ-մուռ գալիս պտտվում.
Փիշեր լինի մշուշ թանձր
Ո՛չ վախենում ո՛չ պահվում։

(Վ. Տալյան)

## XII. ՉԱԿԵՐՏԻ ԵՎ ԱՆՋԱՏՄԱՆ ԳԾԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 119. — Արտաշրեցե՛ք և ցույց տվեք, թե որ նախադասություններն են առնված չակերտների մեջ։*

### ԱՆՏԵՂԻ ՀԱՐՑ

*Մի օր ճանապարհին հանդիպեցին երկու ծանոթներ՝ Պողոսն ու Կարոն։ Կարոն նայեց Պողոսի կողովի մեջը և հարցրեց. «Այդ ի՞նչ ես տանում քաղաք»։ Պո-*

*ղոսը պատասխանեց. «Դարման»։ Կարոն զարմանքով բացագանչեց. «Այդ ի՞նչ ես ասում։ Չէ՞ որ կողովումդ ձու է»։ Պողոսը հանդարտ պատասխանեց. «Թե որ տեսար, էլ ինչու՞ հարցրիր»։*



*Անփոփոխ մեջ բերված ուրիշի խոսքն առնվում է չակերտների մեջ և սկսվում է մեծատառով։ Ուրիշի խոսքից առաջ դրվում է միջակետ։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 120. — Արտաշրեցե՛ք և դրե՛ք բաց թողնված չակերտներն ու միջակետները։*

### ԴԵՂԸ

*Մի փոքրիկ աղջիկ կար. նրա մայրիկը հիվանդացավ։*

*Բժիշկը եկավ և ի՜նչ տեսավ. մայրիկը մի ձեռքով գլուխն է բռնել, մյուսով խաղալիքներն է հավաքում։ Իսկ աղջիկը նստել է իր փոքրիկ աթոռին և հրամաններ է տալիս Կաթ բեր։ Մայրիկը վեր կացավ հատակից, հոգնած մեջքը ուղղեց և աղջկա համար կաթ լցրեց։ Տիկնիկս տուր, կոշիկներս հանի՛ր,— դարձյալ գոռում է աղջիկը։*

*Բժիշկը նայեց նրան և ասաց. Մինչև որ աղջիկը վերջ չտա իր հրամաններին, մայրիկը չի լավանա։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 121. — Գտե՛ք, թե ինչի՞նից փոխարինում առդասկզբի գծերը.*

*Վահագնը հարցրեց Վահանին.*
*— Ի՞նչ գիրք ես կարդացել։*
*Վահանը պատասխանեց.*
*— Պուշկինի «Ոսկե ձկնիկը», Թումանյանի «Շունն ու կատուն» և էլի ուրիշ գրքեր։*
*Վահագնը ուզեց ստուգել, թե ճիշտ է ասում Վահանը և հարցրեց.*
*— Ո՞ւմ ցանցն ընկավ ոսկե ձկնիկը։*

— Ծեր ձկնորսի, — վառոտ պատասխանեց Վահանը։

Երբ ուրիշի խոսքն սկսում է նոր տողից,
չակերտների փոխարեն գծեր են դրվում։
Դրանք կոչվում են անջատման գծեր։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 122. — Հետևյալ հատվածը ուշադիր կարդացե՛ք և արտագրեցե՛ք. չակերտներով տրված ուրիշի խոսքերը գրեցե՛ք նոր տողից և բաժանեցե՛ք անջատման գծերով։

## ԱՅԴ ԱՆՈՒՆԸ ՉՆՉԵԼ ՉԻ ԼԻՆԻ

Իսպանական բանտերից մեկում բանտարկվեց նաև մի զինվոր. նա գիշերը շատ անհանգիստ քնեց։ Լուսաբացին բանտարկյալներից մեկը հարցրեց. «Ինչու՞ էիր գիշերն անհանգիստ»։ Նա ժպիտը դեմքին ցույց տվեց պատը։ Պատի վրա խոշոր տառերով գրված էր. «Կեցցե՛ Լենինը»։

«Ո՞վ է գրել», — հարցրեց ընկերը։ «Ես», — հպարտությամբ պատասխանեց նա։ Երբ արթնացան մյուս բանտարկյալները, ներքին մի լուռ հրճվանքով արտահայտեցին իրենց խոր հարգանքը գեղի այդ անունը։

Քիչ հետո ներս մտավ վերակացուն։ Կատաղած հարցրեց. «Ո՞վ է գրել»։ Բոլորը լուռ էին։

Վերակացուն բերել տվեց մի ներկաման, որը ներկով ծածկեց գրած բառերը։ Երբ ներկը չորացավ, նրա տակից նույնությամբ կարդացվում էր. «Կեցցե՛ Լենինը»։

Կատաղած վերակացուն կրկին անգամ ներկով ծածկեց գրվածը։ Սակայն չորանալուց հետո նորից պարզ կարդացվում էր. «Կեցցե՛ Լենինը»։

Կատաղությունից իրեն կորցրած վերակացուն այս անգամ քարտաշ բերել տվեց և հրամայեց քերել գրվածը։ Քարտաշը քերեց, բայց այս անգամ ավելի պարզ էր կարդացվում. «Կեցցե՛ Լենինը»։

Զինվորը ժպտաց և հրճվանքով բացականչեց. «Այդ անունը ջնջել չի լինի»։

## XIII. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 123. — Որոշեցե՛ք առարկա ցույց տվող բառերը։

## Ա Շ Ո Ւ Ն

Դաշտ ու անտառ գեղին հագան։
Ծառ ու ծաղիկ մերկացան։

Թռչունները երամ-երամ
Մեր աշխարհից հեռացան։

(Հ. Թումանյան)

Գտեք նկարի բովանդակությունը։ Գրեցեք շարադրություն վերոհիշյալ վերնագրով. «Աշուն»։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 124. — Գտե՛ք, թե ի՞նչ հարցերի են պատասխանում առարկա ցույց տվող շեղագիր բառերը։

## ՀԱՆԵԼՈՒԿ

Պապը շինեց մի կամուրջ,
Ո՛չ մեխ ուներ, ո՛չ էլ մուրճ։

(Մ. Կոթյուն)



Առարկա ցույց տվող բառը կոչվում է գոյական անուն կամ գոյական։ Գոյական անունը պատասխանում է հետևյալ հարցերին՝ ով, ի՞նչ, ո՞ւմ, ինչի՞, ումի՞ց, ինչի՞ց, ումո՞վ ինչո՞վ, ինչո՞ւմ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 125. — Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք գոյական անունները։ Գրեցե՛ք՝ ի՞նչ առարկաներ են նկարված։

Մարտը տալիս է ձնծաղիկ,
Ապրիլը՝ կապույտ մանուշակ։
Մայիսին բացվում է վարդը,
Սոխակը երգում անուշակ։

Հունիսը մեզ խատ է տալիս,
Իսկ հուլիսը՝ առատ ցորեն,
Օգոստոսը՝ տանձ ու խնձոր
Եվ ուրիշ շատ հասուն մրգեր։

Սեպտեմբերը մեզ տալիս է
Խաղողի բոլոր տեսակը,
Հոկտեմբերը՝ կարմիր գինին,
Նոյեմբերը՝ բողկն ու տակը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 126. — Անպիր սովորեցե՛ք բանաստեղծությունը և առանց դրքին նայելու գրեցե՛ք ձեր տետրում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 127. — Գրեցե՛ք շարադրություն. «Տարվա չորս եղանակները»։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 128. — Արտագրեցե՛ք գոյական անունները և յուրաքանչյուրի կողքին փակագծում դրե՛ք համապատասխան հարցը։

## ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ

Պիտներ Հայկն ու Շողիկը գնացին մոտիկ գյուղը գիրք գնելու։ Մեկ էլ մի ֆուրգոն դողդողով ու ճռճռալով եկավ ու անցավ։ Ֆուրգոնի մեջ գլխին կարմիր թաշկինակ կապած մի կին էր նստած։

Ֆուրգոնից մի կապոց վայր ընկավ։ Հայկն ու Շողիկը կապոցը գտան, բաց արին, տեսան մեջը շատ փող կա։

— Ի՞նչ անենք, Հայկ,—հարցրեց Շողիկը։

— Ի՞նչ պիտի անենք,—պատասխանեց Հայկը,—կարմիր թաշկինակ կապած մորաքրոջը կգտնենք, փողերը կտանք իրեն։

Օրինակ՝ Հայկ (ո՞վ), գյուղ (ի՞նչ)։



### ա) ՀԱՍԱՐԱԿ ԱՆՈՒՆ

Միևնույն տեսակի ամեն մի առարկային տրվող անունը կոչվում է հասարակ անուն։

Օրինակ՝ մատիտ, պիտներ, ձկնիկ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 129.—Արտագրեցե՛ք հասարակ անունները

## ՄԵՐ ԴԱՍԱՐԱՆԸ

Մեր դասարանը մի մեծ սենյակ է։ Նրա հատակը տախտակամած է և կարմիր ներկած։ Առաստաղը և պատերը սվաղված են դաջով ու ոսպիտակացրած կավիճով։

Մեր դասարանը լուսավոր է, ունի երկու փեղկանի մեկ դուռ և երեք մեծ լուսամուտ։ Հատակը, դռները և լուսամուտների փեղկերը շինված են փայտից։ Մեկ լուսամուտն ունի օդանցք։

Դասարանի մեջ շարված են նստարաններ։ Նստարանների առաջ դրված է մեկ սեղան և մեկ աթոռ՝ ուսուցչի համար։ Բոլոր նստարանները շինված են փայտից. նստարանները ներկված են կողքերից դեղին, վրայից՝ սև գույնով։ Նստարաններն ունեն դարակներ՝ պայուսակները տեղավորելու համար։ Յուրաքանչյուր նստարանի վրա նստում են երկու աշակերտ։

Նստարանների դիմաց գտնվում է գրատախտակը, նրա գոգին դրված է կավիճը, իսկ կողքին կախված է ջնջոցը։

Երբ ուսուցիչը ներս է մտնում, մենք ոտքի ենք կանգնում։ Նա բարևում է և ասում. «Նստեցե՛ք»։ Մենք նստում ենք։ Սկսվում է դասը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 130.—Ուշադրություն դարձրեք հնաբյալ բառերի ուղղագրության վրա, արտագրեցե՛ք բառատեսրերում.

Մենյակ, անկյուն, ուախտակամած, դաշ, վեղկ, վայր, օդանցք, առաջ, նստարաններ, մեջ, կողք, գույն, պայուսակ, յուրաքանչյուր, գրատախտակ, դռդ, երբ, ուսուցիչ, ուոք։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 131.—Կազմեցե՛ք շարադրություն «Մեր դասարանը»։

## բ) ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆ

Միատեսակ առարկաներից միայն մեկին տրված անունը կոչվում է հատուկ անուն։

Օրինակ՝ Արամ, Սևան, Երևան։

Հատուկ անուններ են անձանց, գյուղերի, քաղաքների, ծովերի, լճերի, լեռների և այլ անունները, ինչպես և կենդանիներին տրվող անունը։

Գրելիս հատուկ անունները սկսում ենք մեծատառով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 132.—Ուշադիր կարդացե՛ք և գտե՛ք հատուկ անունները։ Գրեցեք նամակ հայրիկին, մայրիկին կամ ձեր ընկերոջը սրա օրինակով։

## ՍԱԹԻԿԻ ՆԱՄԱԿԸ ԻՐ ՏԱՏԻԿԻՆ

Սիրելի՛ և անմոռանալի՛ տատիկ ջան.

Երևանի կայարանից որ գնացք նստեցինք, գիշերով անցանք Լենինական և Կիրովական քաղաքները։



Լուսաբացին մտանք Լոռվա ձորը, իսկ կեսօրին հասանք Թբիլիսի։ Թբիլիսին շատ մաքուր ու գեղեցիկ քաղաք է։ Երեկոյան այդտեղից ճանապարհ ընկանք դեպի Բաքու։ Բաքու հասնելիս երևացին նավթահորերի աշտարակները և կասպից ծովը։

Հենց որ գնացքը կանգ առավ, երևաց հայրիկը։ Մենք ավտոմոբիլ նստեցինք և հասանք տուն։

Տատի՛ ջան, ճանապարհին ես շատ բան սովորեցի։ Մայրիկն ինձ պատմեց, որ մենք ապրում ենք Անդրկովկասում։ Անդրկովկասում կա սովետական երեք ռեսպուբլիկա. Հայաստան, Վրաստան և Ադրբեջան։ Հայաստանի մայրաքաղաքն է Երևանը, Վրաստանինը՝ Թբիլիսին, իսկ Ադրբեջանինը՝ Բաքուն։

Տատի՛ ջան, արդեն կարոտել եմ քեզ։ Շատ շուտով նամակ գրիր։ Քեզ բարևում ու համբուրում են հայրիկն ու մայրիկը։ Ես էլ եմ համբուրում քեզ, Երջիկին, Մարգոյին, Կիմին և Հրաչիկին.

Քո նամակին սպասող
և քեզ շատ սիրող՝ ՍԱԹԻԿ

3-ին մայիսի
Բաքու

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 133.—Այբբենական կարգով գրեցե՛ք ձեր ընկերների ազգանուններն ու անունները։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 134.—Այբուբենի ամեն մի տառով գրեցե՛ք մի հատուկ անուն՝ մարդու, քաղաքի, գյուղի, գետի, ծովի, սարի, անապատի կենդանու և այլն։

## գ) ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ

*Գոյական անուններն ունենում են երկու թիվ՝* եզակի *և* հոգնակի:

*Եզակի թիվ ունեցող գոյական անունը ցույց է տալիս մի առարկա. օրինակ՝ քար, մատիտ։*

*Հոգնակի թիվ ունեցող գոյականները ցույց են տալիս, մեկից ավելի միատեսակ առարկաներ. օրինակ՝ քարեր, մատիտներ։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 135.—Կազմեցե՛ք գոյական անունների հոգնակին։*

| | | | |
|---|---|---|---|
| *պատ* | *պատեր* | *մատիտ* | *մատիտներ* |
| *քար* | . . . | *տետրակ* | . . . . |
| *փայտ* | . . . | *պայուսակ* | . . . . |
| *բույս* | . . . | *դպրոց* | . . . . |
| *վարդ* | . . . | *ուսուցիչ* | . . . . |
| *ուլ* | . . . | *աշակերտ* | . . . . |

*Միավանկ գոյական անունների հոգնակին ունենում է* եր, *իսկ բազմավանկ գոյական անունների հոգնակին՝* ներ *վերջավորություն։*

*Բացառություն.* մարդ *բառի հոգնակին լինում է* մարդիկ, կին *բառի հոգնակին լինում է* կանայք:

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 136.—Գրեցե՛ք հինգ բազմավանկ բառեր և կազմեցե՛ք նրանց հոգնակին։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 137.—Գտե՛ք միավանկ և բազմավանկ գոյական անունները և կազմեցե՛ք նրանց հոգնակին։*



## Ա. ՇՈՒՆ

*Դեղնած դաշտերին*
*Իջել է աշունը.*
*Անտառը կրկին*
*Ներկել է նախշուն։*

*Պաղ-պաղ մեգի հետ*
*Փչում է քամին.*
*Քշում է, տանում*
*Տերևը դեղին։*

*Տխուր հանդերից*
*Մարդ ու անասուն*
*Քաշվում են կամաց*
*Իրենց տունն ու բույն։*

(Հ. Թումանյան)

*Ուշադրություն դարձրեք հետևյալ բառերի ուղղագրության վրա՝* դեղնած, իջել է, նախշուն, մեգ, տերև, մարդ, բույն։

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 138.—Գրեցե՛ք շարադրություն «Աշուն» վերնագրով, չմոռանաք գրել նաև կոլխոզի աշխատանքների մասին։*

Գառ, մուկ, դուռ, ձուկ, հարս, ոտ, ձեռ, լեռ, եզ *միավանկ գոյական անունները հոգնակի թվում ունենում են* ներ. *օրինակ՝* գառ-գառներ։

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 139.—Կազմեցե՛ք* մուկ, դուռ, ձուկ, հարս, ոտ, ձեռ, լեռ, եզ *միավանկ բառերի հոգնակին։*

Ն-ով վերջացող բազմավանկ բառերը հոգնակի ունենում են երկու Ն. օրինակ՝ նստարան-նստարաններ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 140.—Պատմեցե՛ք նկարի բովանդակությունը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 141.—Արտագրեցե՛ք հոգնակի թիվ ունեցող գոյականները և ընդգծեցե՛ք նրանց հոգնակի վերջավորությունները։

## ՏԱՐՎԱ ՈՐ ԵՂԱՆԱԿՆ Է

Ես բերում եմ պայծառ արև և տաք օրեր։

Ես ծածկում եմ դաշտերը դալար խոտերով ու զարդարում անտառները կանաչ տերևներով։ Ես բերում եմ ծաղիկներ ու թիթեռներ, կանչում եմ թռչուններին հեռու երկրներից և աշխարհը լցնում երգերով։

Մի՛թե ինձ չեք սիրում։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 142.—Գրեցե՛ք նկարի բովանդակությունը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 143.—Արտագրեցե՛ք հոգնակի թիվ ունեցող գոյական անունները և կազմեցե՛ք նրանց եզակին, ապա արտագրեցե՛ք եզակի թիվ ունեցող գոյականները և կազմեցե՛ք նրանց հոգնակին։

## ՏԱՐՎԱ ՈՐ ԵՂԱՆԱԿՆ Է

Ես ոսկեզօծում եմ արտերը և կրացնում հասկերի գլուխները։ Ես կախ եմ անում այգիներում տանձ, խնձոր, դեղձ ու խաղող։ Ես ճուտիկներին թռցնում եմ բներից և հանում մանուկներին զով անտառը, աղբյուրների մոտ, ազատ սարերը։

Մի՛թե ինձ չեք սիրում։

դ) ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՂ ՀՈԴԸ

Երբ առարկան հայտնի է, նրա անվան վերջում դրվում է ը կամ Ն, որը կոչվում է որոշող հոդ. օրինակ՝ մեր դասարանի աշակերտը, մեր դասարանի աշակերտուհին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 144.—Արտագրեցե՛ք հոդ ունեցող գոյականները, ընդգծեցե՛ք հոդը։

Զմեռն անցավ։
Եկավ գարուն։
Ձյունը հալվեց,
Լցվեց առուն։

Արև ծագեց
Արևելքից,
Ծիլեր քաշեց
Գետնի տակից։

Տաք հարավից
Եկան հավքեր,
Բույն հյուսեցին
Ընկեր-ընկեր։

Ծառը պտկեց,
Տվեց բողբոջ,
Առուն հանեց
Անուշ խոխոջ։

Փռվեց կանաչ
Աբրի լանջին,
Կարմրեց մորին
Թփի միջին։

Դաշտը թավիշ
Զգեստ հագավ,
Կանգնեց քարին,
Երգեց կաքավ։

Արոտ դնաց
Ծնած մաքին,
Կաթը տվեց
Անուշ ձագին։

Կարապն իջավ,
Ընկավ գետը,
Օձը գնաց՝
Ճուտն իր հետը։

Մուկ ու մողես,
Միջատ, զեռուն
Արև ելան,
Եկավ գարուն։

(Խնկո-Ապեր)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 145.—Գրեցե՛ք շարադրություն հետևյալ վերնագրով՝ «Գարնան գալուստը»։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 146.—Կազմեցե՛ք նախադասություններ և որոշող հոդով գործածեցե՛ք հետևյալ գոյականները։

Պիոներ, տրակտոր, Վազգեն, Հայկ, ուսուցչուհի, աշակերտուհի, ծիծեռնակ, սոխակ։



# XIV. ՀՈԼՈՎՈՒՄ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 147.—Որոշեցե՛ք, թե ամեն մի նախադասության մեջ ի՞նչ անդամ է աշակերտ գոյականը, ի՞նչ հարցի է պատասխանում։

Աշակերտը գիրք է կարդում։ Այդ աշակերտի գիրքը հետաքրքրական է։ Աշակերտին այս գիրքը տվել է ուսուցիչը։ Ուսուցիչը սիրում է այդ աշակերտին։ Ուսուցիչն աշակերտին դաս է հարցնում։ Նա հպարտանում է իր ջանասեր աշակերտով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 148.—Վերևի վարժությունից արտագրեցե՛ք աշակերտ բառի բոլոր ձևերը՝ հոլովները իրար տակ՝ յուրաքանչյուրի դիմաց գրելով նաև հարցը։

Գոյական անվան պաշտոնը նախադասության մեջ փոխվելիս՝ փոխվում է նրա վերջավորությունը։

Գոյականի վերջավորության փոփոխությունը կոչվում է հոլովում։

Գոյական անվան ամեն մի ձև կոչվում է հոլով։

ա) ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Աշակերտը (ո՞վ) կարդում է գիրք։



Բաժակը (ի՞նչը) լիքն է։

Աշակերտը բառը ենթակա է։
Բաժակը բառը ենթակա է։

Աշակերտը և բաժակը գոյական անունները գրված են ուղղական հոլովով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 149.— Նախորդ՝ 144 վարժության ոտանավորի մեջ գտե՛ք ուղղական հոլովով գրված գոյական անունները, այսինքն՝ ամեն մի նախադասության ենթական։

Գոյական անվան ուղղական հոլովը ցույց է տալիս նախադասության ենթական։

Ուղղական հոլովը պատասխանում է ո՞վ կամ ի՞նչ հարցին։ Ուղղական հոլովը բառի ուղիղ, անփոփոխ ձևն է։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 150.— Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք ուղղական հոլովով գրված գոյական անունները։

Հուրհրում էր արևն ուրախ,
Գետն էր գնում քաղցրակարկաչ։
Զորս դին՝ գարնան կարմիր ծիծաղ,
Վարդեր կարմիր, կարմիր կակաչ։

Արտույտն երգով ճախրում էր վեր։
Արոտներում խրխինջ, կանաչ։
Զորս դին՝ գարնան կանաչ թևեր,
Կանաչ հովեր, ծովեր կանաչ։



Մեր մանկական ճիչն էր թնդում
Դաշտերի մեջ ցողաթաթախ.
Խայտում էինք զմրուխտ գետում.
Եվ թնդում էր արևն ուրախ...

(Ավ. Իսահակյան)

Ուղղական ձևով գրվում է նաև կոչականը, որ ստանում է շեշտ, օրինակ՝ «Արի՛, արի՛, ով գարուն»։ Ո՛վ գարուն ուղղական հոլովի ձևով է։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 151.— Ուղղական հոլովով գործածեցե՛ք պիոներ, գետ, դպրոց գոյականները։

բ) ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ



Աշակերտի (ում) պայուսակը կախված է պատից։



Բաժակի (ինչի՞) ստվերն ընկած է սեղանին։

Աշակերտի բառը ենթակայի լրացում է. ցույց է տալիս պատկանելություն, այսինքն՝ ո՞ւմ պայուսակը։

Բաժակի բառը ենթակայի լրացում է. ցույց է տալիս պատկանելություն, այսինքն՝ ինչի՞ սավերը։

Աշակերտի և բաժակի գոյական անունները գրված են սեռական հոլովով։

> Գոյական անվան սեռական հոլովը ցույց է տալիս առարկայի պատկանելությունը։
>
> Սեռական հոլովը պատասխանում է ո՞ւմ կամ ինչի՞ (ինչերի՞) հարցերին։ Գոյականի սեռական հոլովն ունենում է ի, ու, ան, յան, վա, ոջ վերջավորություններից որևէ մեկը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 152.—Անգի՛ր սովորեցեք և որոշեցեք սեռական հոլովով գրված գոյականները։

## ՍՏԱԼԻՆ ՋԱՆ

Մեր լեռնային աղբյուրների
Կարկաչահոս ջուրը քեզ,
Ծաղկածիծաղ բլուրների
Անմահական բույրը քեզ։

Մեր դաշտերի հազարերանգ
Ծաղիկների փունջը քեզ,
Եվ անթառամ պարտեզների
Բուրումնալից վարդը քեզ։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 153.—Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք սեռական հոլովով գրված գոյական անունները։

Ես այն եմ սիրում
Էն որ կրտսեպ առուցի պես
Միր վրակներն են հերին լողում,
Էն որ ջրուների վերջին հայրցի
Քամի ադվանդ կանգնած է լողում,
Էն որ արևի կենսատու լոգից
Գարնան առաջին ծաղիկն է ծլում
Եվ մանուկի պես արթնացած ֆնից
Հոգիներդ եմ լում։
Ես այն եմ սիրում։

(Հակոբ Հակոբյան)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 154.—Կազմեցե՛ք նախադասություններ և սեռական հոլովով գործածեցե՛ք հետևյալ բառերը.

Գիրքեր, գետ, դպրոց։

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 155.**—*Որոշեցե՛ք և գրեցե՛ք՝ ինչ կենդանու գլուխ է. ընդգծեցե՛ք սեռականով դրված գոյականները։*



**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 156.**—*Որոշեցե՛ք և գրեցե՛ք՝ ինչ կենդանու եղջյուր է. ընդգծեցե՛ք սեռականով դրված գոյականները։*

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 157.**—*Որոշեցե՛ք և գրեցե՛ք՝ ինչ կենդանու ոտներ են. ընդգծեցե՛ք սեռականով գրված գոյականները։ Ի՞նչ են ցույց տալիս։*

## դ) ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎ



*Ուսուցիչը գիրքը տալիս է աշակերտին (ում)։*

*Հասմիկը մոտենում է բաժակին (ինչին)։*

Աշակերտին *բառը ստորոգյալի լրացում է. ցույց է տալիս այն առարկան, որին հանգում է ենթակայի գործողությունը, այսինքն՝ որին մի բան է տալիս, մի բան է ասում, որի օգտին մի բան է անում կամ որին մոտենում է ենթական։*

Բաժակին *բառը ստորոգյալի լրացում է. ցույց է տալիս այն առարկան, որին հանգում է ենթակայի գործողությունը, որին մոտենում է ենթական։*

Աշակերտին *և* բաժակին *բառերը դրված են տրական հոլովով։*

> *Գոյական անվան տրական հոլովը ցույց է տալիս, թե ում կամ ինչին է հանգում ենթակայի գործողությունը։*
>
> *Տրական հոլովը պատասխանում է ում կամ ինչին (ինչերին) հարցին, որ տրվում է ստորոգյալի պահանջով։*

Գոյականի տրական հոլովն ունենում է սեռական հոլովի վերջավորությունները, բայց հաճախ ստանում է նաև ն կամ ը հոդը (սրտին, գարնանը և այլն)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 158.—Կարդացե՛ք, գտե՛ք տրական հոլովով գործածված գոյական անունները, գրեցե՛ք ստորոգյալի հետ և ցույց տվեք՝ ինչ հարցի են պատասխանում։

Անուշը հանդիպեց Կարոյին։ Աղջիկը նամակ գրեց հայրիկին։ Պետիկը մոտեցավ դարակին։ Արշակը ծաղկեփունջը հանձնեց ուսուցչին։ Զանասեր Աշոտը սեղանը դրեց սեղանին և սկսեց կարդացածը պատմել մայրիկին։ Ձյունը դիպվել է լեռան գագաթին։ Անձրևի կաթիլները դիպչում են քարին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 159.—Արտագրեցե՛ք ենթական, ստորոգյալը և տրական հոլովով դրված լրացումը։

1. Գարնան ջուրը դիպավ սարերի ձյունին, և ձյունը կամացուկ արտասվեց։ Ջինջ կաթիլները ընկան գետին, գրկվեցին ուրիշ կաթիլների հետ և գլորվեցին ցած։

Գլորվում են ու փսփսում.

— Ճամփա...

— Այս ո՞վ է փսփսում,—մտածեց ծաղիկը, վեր հանեց գլուխը, պայծառ արևը տեսավ և ուրախությունից անուշ բուրմունք արձակեց։

2. Արև ծաղեց մեր աշխարհին,
Մարդուն, հողին, հանդին, քարին,
Տեսանք կյանքի սերն ու բարին,—
Մեզ արև տվողիդ մատաղ։

(Մ. Կորյուն)



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 160.—Կազմեցե՛ք նախադասություններ և տրական հոլովով գործածեցե՛ք հետևյալ գոյական անունները։

Պիոներ, դետ, դպրոց։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 161.—Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք տրական հոլովով դրված գոյական անունները։

## ԱՐԵՎԻ ՀՐԱՄԱՆԸ

Գարնանային մի սիրուն առավոտ արևը բարձրացավ ու ասաց աստղերին.

— Դե, սիրուն աստղեր, երկնքի ճրագներ, հիմա գնացեք ու գիշերը եկեք։

Ծաղիկներին ու թռչնիկներին ասաց.

— Զարթնեցեք, ծաղիկներ, զարթնեցեք, թռչնիկներ։

Եվ զարթնեցին բոլոր ծաղիկները, բոլոր թռչնիկները։

դ) ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Ուսուցիչը փաղաքշում է իր աշակերտին (ում)։

Հասմիկը վերցրեց բաժակը (ինչը)։

Աշակերտին բառը ստորոգյալի լրացում է, ցույց է տալիս այն առարկան, որը կրում է իր վրա ենթակայի գործողությունը։
Բաժակը բառը ստորոգյալի լրացում է, ցույց է տալիս այն առարկան, որը կրում է իր վրա ենթակայի գործողությունը։
Աշակերտին և բաժակը գոյական անունները դրված են հայցական հոլովով։

> Գոյական անվան հայցական հոլովը ցույց է տալիս ենթակայի գործողությունն իր վրա կրող առարկան։
>
> Հայցական հոլովը պատասխանում է ո՞ւմ կամ ի՞նչ (ինչը՞) հարցին, որ տրվում է նրան ստորոգյալի պահանջով։ Հայցական հոլովը նման է լինում կամ ուղղականին կամ տրականին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 162.—Կարդացե՛ք և գտե՛ք հայցական հոլովով գործածված գոյական անունները։ Կազմեցե՛ք նախադասություններ՝ ինչ է բերում գարունը, ինչ է բերում ամառը, ինչ է բերում աշունը, ինչ է բերում ձմեռը։

## ԶՈՐՍ ԵՂԱՆԱԿ

Թե գարուն է նաշ-նախշուն,
Նա ինչը՞ է մեզ բաշխում
— Ծիլ ու ծաղիկ, կանաչ խոտ,
Ալ ու ալվան վարդ շաղոտ։
Թե ամառ է, շոգ ամառ,
Ի՞նչ է բերում մեզ համար.
— Ցորեն, գարի ու հաճար՝
Շատ հոգսերի դեղ ու ճար։
Թե աշուն է պտղաբեր,
Ի՞նչ է բերում մեզ նվեր.



— Նուռ, սերկևիլ, տանձ, խնձոր,
Դեղձ ու խաղող մեղրածոր։
Թե ձմեռ է ցրտաշունչ,
Ի՞նչ է թափում լուռ ու մունջ.
— Փաթիլ-փաթիլ փափուկ ձյուն՝
Արծաթի պես պսպղուն։

(Խնկո-Ապեր)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 163.—Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք հայցական հոլովով դրված գոյականները։

Զմռան մի ցուրտ առավոտ
Ծիտը թռավ ծտի մոտ,



Ասաց. «Ծիտիկ,
Իմ լավ քույրիկ,
Ո՛չ թռչում ես, ո՛չ երգում,
Ի՞նչ ես անվերջ երազում»։
Ասաց. «Գարուն եմ ուզում,
Կանաչ մարգեր եմ ուզում,
Գարնան երգեր եմ ուզում,
Ուզում եմ ես ծիլ ու խոտ,

Գարնան երկինք, մաքուր օդ,
Արտեր, արտեր, շող ու շաղ։
Կարմիր վարդեր, երգ ու տաղ»։

(Մ. Կորյուն)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 164.—Կազմեցե՛ք նախադասություններ և հայցական հոլովով գործածեցե՛ք հետևյալ գոյականները.
Պիոներ, գետ, դպրոց։

Ե) ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ



Ուսուցիչը ծաղկեփունջ ստացավ իր աշակերտից (ումի՞ց)։

Հատիկը ջուրը թափում է բաժակից (ինչի՞ց)։

Աշակերտից բառը ստորոգյալի լրացում է. ցույց է տալիս այն առարկան, որից սկսվում է ենթակայի գործողությունը։
Բաժակից բառը ստորոգյալի լրացում է. ցույց է տալիս այն առարկան, որից սկսվում է ենթակայի գործողությունը։
Աշակերտից և բաժակից գոյականները դրված են բացառական հոլովով։



Գոյական անվան բացառական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որից սկսվում է ենթակայի գործողությունը։
Բացառական հոլովը պատասխանում է ումի՞ց կամ ինչի՞ց (ինչերի՞ց) հարցին։
Բացառական հոլովն ունենում է ից կամ ուց վերջավորությունը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 165.—Բացառական հոլովով գործածեցե՛ք պիոներ, գետ, դպրոց բառերը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 166.—Կարդացե՛ք և գտե՛ք բացառական հոլովով գործածվող գոյականները։ Որոշեցե՛ք, թե ինչ հարցի են պատասխանում։

Շունը կանչեց փիսիկին,
Փիսոն բռնեց շնիկից,
Շունը բռնեց թռռնիկից,
Թռռը բռնեց տատիկից,
Տատը բռնեց պապիկից,

Պապը բռնեց շաղգամից,
Ու հինգ հոգով միասին
Այդ շաղգամը քաշեցին։

*Բայց շաղգամը խոր հողում*
*Ամուր մնաց իր տեղում։*

(Աբ. Խնկոյան)

## զ) ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎ

*Գոյական անվան* գործիական *հոլովը ցույց է տալիս ենթակայի գործողության միջոցը։*

*Գործիական հոլովը պատասխանում է* ումո՞վ *կամ* ինչո՞վ (ինչերո՞վ) *հարցին։*

*Գործիական հոլովը ունենում է* ով *կամ* ամբ, *ամբ վերջավորությունը։*



*Ուսուցիչը հպարտանում է իր գերազանցիկ աշակերտով (ումով)։*

*Հասմիկը բաժակով (ինչով) ջուր է խմում։*

Աշակերտով *բառը ստորոգյալի լրացում է. ցույց է տալիս այն առարկան, որը ենթակայի գործողության միջոցն է։*

Բաժակով *բառը ստորոգյալի լրացում է. ցույց է տալիս այն առարկան, որը ենթակայի գործողության միջոցն է։*



Աշակերտով *և բաժակով գոյական անունները դրված են* գործիական *հոլովով։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 167.— Կազմեցե՛ք նախադասություններ և գործիական հոլովով գործածեցե՛ք պիոներ, գետ և դպրոց գոյականները։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 168.— Կարդացե՛ք և գտե՛ք գործիական հոլովով գործածված գոյականները։*

## ՆՈՅԵՄԲԵՐԻՆ

*Գարնան անուշ հույսով եկար,*
*Նոյեմբե՛ր, դու հույզով եկար,*
Ստալինը Մեծ *քեզ կյանք տվեց,*
*Նրա պայծառ լույսով եկար։*
*Հույսով եկար, հույզով եկար,*
*Նրա պայծառ լույսով եկար։*

(Գ. Արտուճի)

## ԾԱՂԻԿ

*Ես արևի ջինջ շողերով,*
*Ջերմ շողերով եմ բացվել,*
*Արշալույսի մաքուր ցողով,*
*Պայծառ շողով լվացվել։*

(Մ. Կորյուն)

## ՄԱՅԻՍՅԱՆ ՕՐԵՐ

*Ինչ անուշ է, ջան,*
*Կյանքը մայիսյան*
*Իր վառ օրերով,*
*Իր լավ օրերով։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 169.— Լրացրե՛ք՝ ինչով ...*

| | |
|---|---|
| *Գրում են ....* | *Փոցխում են .....* |
| *Հնձում են ....* | *Դիզում են .....* |
| *Փորում են ....* | *Կոփում են ....* |
| *Տաշում են ....* | *Ջարդում են .....* |
| *Ջրում են .....* | |

*Որոշեցե՛ք՝ ո՞ր հոլովով են դրված գոյականները։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 170.— Կարդացե՛ք մի քանի անգամ, որոշեցե՛ք ընդգծված գոյական անունների հոլովը։*



## ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՆՈՒՆԸ

Ս. Միխալկով

Սավառնակը մեզ
Ուր էլ որ տանի,
Ուր էլ որ գնանք
Ծավով հայրենի,

Գյուղում, քաղաքում,
Դաշտերում անծայր,
Մեզ հետ է նրա
Անունը պայծառ։

Եթե երգում ես
Դու երգը բախտիդ,
Եթե դժվարին
Եվ ծանր է ուղիդ,

Հիշիր, մենակ չես.
Արեվի պես վառ
Սրտումդ է նրա
Անունը պայծառ։

Եթե դու կռվում
Վերք ես ստացել,
Եթե կործանման
Եզրին ես հասել,

Փակիր խոր վերքդ,
Արցունքդ սրբիր
Եվ Առաջնորդի
Անո՛ւնը հիշիր.

Կապույտ երերով,
Ծփան գետերով
Նա քեզ օգնություն
Կուղարկի խկուլն։

Քաջության համար
Մարտերում դաժան
Եթե ստանաս
Դու շքանշան,

Ձեռքդ սեղմողը
Ով էլ որ լինի,
Կզգաս դու ձեռքը
Մեծ Ստալինի։

(Փոխադրեց՝
Գ. Միքայելյան)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 171.— Գտե՛ք միայն գործիական հոլովով գործածված գոյականները։ Ի՞նչ հարցի են պատասխանում նը-բանք։

## Է) ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎ



Աշակերտները պարապում են դասարանում (ինչո՞ւմ)։

Բաժակում (ինչո՞ւմ) թիթեռ կա։

Դասարանում բառը սառորդյալի լրացում է. ցույց է տալիս այն առարկան, որի մեջ գործում, գտնվում է ենթական։

Բաժակում բառը սառորդյալի լրացում է. ցույց է տալիս այն առարկան, որի մեջ գտնվում է ենթական։

Դասարանում և բաժակում գոյական անունները դրված են ներգոյական հոլովով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 172.— Կազմեցե՛ք նախադասություններ, ներգոյական հոլովով գործածեցե՛ք գյուղ, գետ, դպրոց գոյականները։



Գոյական անվան ներգոյական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որի մեջ ենթական մի բան անում կամ լինում է։

Ներգոյական հոլովը պատասխանում է ինչո՞ւմ հարցին։ Ներգոյական հոլովն ունենում է ում վերջավորությունն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 173.— Անգի՛ր սովորեցեք, գտե՛ք ներգոյական հոլովով գործածված գոյականները։



Բացվեց այգը արևելքում վառ ու գառ,
Գետի վրա լույսը հանգավ մեղմաբար։
Ծաղկանց վրա ցողն էլ իջավ դաշտերում,
Շարժվեց հոտը ապա կանաչ հանդերում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 174.— Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք ներգոյական հոլովով դրված գոյական անունները։

Լինում է մի սար,
Էն սարում մի ծառ,
Էն ծառում փչակ,
Փչակում մի բույն,
Բնում երեք ձագ
Ու վրան կկուն։

(Հ. Թումանյան)

Մարդ և կենդանի ցույց տվող գոյական անունները ներգոյական հոլով չունեն։

Դրանց ներգոյականի փոխարեն գործ է ածվում սեռական հոլովը մեջ բառի հետ. օրինակ՝ աշակերտի մեջ, թռչունի մեջ, հոլթի մեջ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 174 ա.—Ուշադիր կարդացե՛ք մի քանի անգամ, Գտե՛ք ներգոյական հոլովով դրված գոյականները։ Որոշեցե՛ք ընդգծված գոյականների հոլովը։

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Կանգնած ենք ահա նկարիդ դիմաց,
Եվ քո անունն է մեր պայծառ ursում,
Քեզ ենք մենք դիմում ահա սրտաբաց,
Մեր Մեծ ՍՏԱԼԻՆ, շնորհակալություն։

Այդ քո անունն է, մեր հայը հարազատ,
Արեգակից վառ բոլորիս շողում,
Այդ դու մեզ տվիր հայրենիք ազատ,
Որի նմանը չկա աշխարհում:

Նա միշտ մոր նման բռնած մեր ձեռքից՝
Տանում է կյանքի ճանապարհով լայն,





Եվ դու լույս Կրեմլից, մեր մեծ ուսուցիչ,
Ցծում ես երկրի ու մեր ապագան:

Մենք քեզ տեսնում ենք ամեն, ամեն օր,
Դու միշտ մեզ հետ ես, դու միշտ մեր ursում,
Մանկապարտեզում, դասարանում նոր
Մեզ՝ մանուկներիս, նկարից ժպտում։

Դու պարգևել ես բյուր մանուկների
Ուրախ, երջանիկ և լույս մանկություն,
Երեխաներից բոլոր ազգերի
Քեզ, հայր ՍՏԱԼԻՆ, շնորհակալություն։

Երդվում ենք ահա սիրել, փայփայել
Մեր Հայրենիքը՝ մեծ ու լուսածին,
Երդվում ենք ահա միշտ արժան լինել
Քո պայծառ անվան և քո մեծ գործին։

(Գ. Բորյան)

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 175.—Սովորել հոլովները և նրանց համապատասխան հարցերը, պատասխանելով նախադասություններով։*

*Ուղղական—ով, ինչ(ը)*
*Սեռական—ում, ինչի*
*Տրական—ում, ինչի(ն)*
*Հայցական—ում, ինչ(ը)*
*Բացառական—ումից, ինչից*
*Գործիական—ումով, ինչով*
*Ներգոյական—ինչում*

Ո՞վ, ո՞ւմ, ումի՞ց, ումո՞վ հարցերը տրվում են անձ ցույց տվող գոյական անուններին, իսկ ի՞նչ, ինչի՞, ինչի՞ն, ինչի՞ց, ինչո՞վ, ինչո՞ւմ հարցերը տրվում են իր ցույց տվող գոյական անուններին։

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 176.—Արտագրեցե՛ք և հարցերի փոխարեն գրե՛ք աշակերտ բառը համապատասխան ձևով։*

*(Ո՞վ) սովորում է։ (Ո՞ւմ) գիրքը հին էր։*

*Ուսուցիչը մի նոր գիրք տվեց (ում)։*
*Ուսուցիչը սիրում է իր (ում)։ (Ումից) գոհ է ուսուցիչը։*
*Ուսուցիչը հպարտանում է իր գերազանցիկ (ումով)։*



Հոլովման աղյուսակ 1

| Թիվ | Հոլով | Հարցեր | Անորոշ | Որոշյալ |
|---|---|---|---|---|
| Եզակի | Ուղղ. | ով | աշակերտ | աշակերտը |
| | Սեռ. | ում | աշակերտի | աշակերտի |
| | Տր. | ում | աշակերտի | աշակերտին |
| | Հայց. | ում | աշակերտ(ի) | աշակերտին |
| | Բաց. | ումից | աշակերտից | աշակերտից |
| | Գործ. | ումով | աշակերտով | աշակերտով |
| | Ներգ. | ——— | ——— | ——— |

| Թիվ | Հոլով | Հարցեր | Անորոշ | Որոշյալ |
|---|---|---|---|---|
| Հոգնակի | Ուղղ. | ովքե՞ր | աշակերտներ | աշակերտները |
| | Սեռ. | ում | աշակերտների | աշակերտների |
| | Տր. | ում | աշակերտների | աշակերտներին |
| | Հայց. | ում | աշակերտներ(ի) | աշակերտներին |
| | Բաց. | ումից | աշակերտներից | աշակերտներից |
| | Գործ. | ումով | աշակերտներով | աշակերտներով |
| | Ներգ. | ——— | ——— | ——— |

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 177.— Նախադասություններ կազմելով՝ աշակերտ բառի նման հոլովեցե՛ք ուսուցիչ, պիոներ և Արամ գոյական անունները։*

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 178.— Արտագրեցե՛ք և հարցերի փոխարեն դրե՛ք բաժակ գոյականի համապատասխան ձևերը։

(Ի՞նչը) սեղանի վրա է։ (Ինչի՞) ջուրը մաքուր չէ։ (Ինչի՞ն) մոտենում է Արան։ Արան վերցնում է (ի՞նչը)։

Արան ջուրը թափում է (ինչի՞ց)։ Արան (ինչով) ջուր է խմում։ Այժմ (ինչո՞ւմ) մաքուր ջուր կա։

Հոլովման աղյուսակ 2

| Թիվ | Հոլով | Հարցեր | Անորոշ | Որոշյալ |
|---|---|---|---|---|
| Մ ա կ ի | Ուղղ. | ի՞նչ(ը) | բաժակ | բաժակը |
| | Սեռ. | ինչի՞ | բաժակի | բաժակի |
| | Տր. | ինչի՞(ն) | բաժակի | բաժակին |
| | Հայց. | ի՞նչ(ը) | բաժակ | բաժակը |
| | Բաց. | ինչի՞ց | բաժակից | բաժակից |
| | Գործ. | ինչո՞վ | բաժակով | բաժակով |
| | Ներգ. | ինչո՞ւմ | բաժակում | բաժակում |

| Թիվ | Հոլով | Հարցեր | Անորոշ | Որոշյալ |
|---|---|---|---|---|
| Հ ա գ ա կ ի | Ուղղ. | ինչե՞ր(ը) | բաժակներ | բաժակները |
| | Սեռ. | ինչերի՞ | բաժակների | բաժակների |
| | Տր. | ինչերի՞(ն) | բաժակների | բաժակներին |
| | Հայց. | ինչե՞ր(ը) | բաժակներ | բաժակները |
| | Բաց. | ինչերի՞ց | բաժակներից | բաժակներից |
| | Գործ. | ինչերո՞վ | բաժակներով | բաժակներով |
| | Ներգ. | ինչերո՞ւմ | բաժակներում | բաժակներում |



Հոլովման աղյուսակ 3

| Թիվ | Հոլով | Հարցեր | Անորոշ | Որոշյալ |
|---|---|---|---|---|
| Մ ի ա կ | Ուղղ. | դեկուցում | դեկուցում | դեկուցումը |
| | Սեռ. | դեկուցման | դեկուցման | դեկուցման |
| | Տր. | դեկուցման(ը) | դեկուցման | դեկուցմանը |
| | Հայց. | դեկուցումը(ը) | դեկուցում | դեկուցումը |
| | Բաց. | դեկուցումից | դեկուցումից | դեկուցումից |
| | Գործ. | դեկուցումով | դեկուցումով | դեկուցումով |
| | Ներգ. | դեկուցումի մեջ | դեկուցումի մեջ | դեկուցումի մեջ |

| Թիվ | Հոլով | Հարցեր | Անորոշ | Որոշյալ |
|---|---|---|---|---|
| Հ ա կ ա | Ուղղ. | դեկուցումներ(ը) | դեկուցումներ | դեկուցումները |
| | Սեռ. | դեկուցումների | դեկուցումների | դեկուցումների |
| | Տր. | դեկուցումների(ն) | դեկուցումների | դեկուցումներին |
| | Հայց. | դեկուցումներ(ը) | դեկուցումներ | դեկուցումները |
| | Բաց. | դեկուցումներից | դեկուցումներից | դեկուցումներից |
| | Գործ. | դեկուցումներով | դեկուցումներով | դեկուցումներով |
| | Ներգ. | դեկուցումների մեջ | դեկուցումների մեջ | դեկուցումների մեջ |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 179.— Նախադասություններ կազմելով՝ բաժակ բառի նման հոլովեցե՛ք հետևյալ գոյական անունները. գետ, ծով, սար, աշխատանք, Երևան։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 180.—Կարդացե՛ք, անգի՛ր սովորեցեք, որոշեցե՛ք՝ յուրաքանչյուր գոյական ո՞ր հոլովով է դրված։

## ԴՈՒ ԱՆՄԱՀ ԵՍ

Ես կանգնած եմ նկարիդ դեմ կարոտով,
Մեր մեծ ընկեր, մեր թանկագին ուսուցիչ,
Եվ հուզմունքից թրթռացող վառ սրտով
Քեզ եմ նայում, մեր առաջնորդ, մեր Իլյիչ։

Դու ժպտում ես իմ լենինյան անկյունից,
Քեզ պատել եմ չթառամող վարդերով,
Էլեկտրական լապտերների լույսերից
Քեզ համար շող պսակ հյուսել կարոտով։

Ո՞վ է ասում՝ հեռացել ես, դու չկաս։
Դու ապրում ես մեր ծաղկազարդ աշխարհում։
Դու անմահ ես, միշտ կլինես, կմնաս
Քո սիրելի թռունիկների սրտերում։

(Գ. Բոբյան)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 181.—Ուշադիր կարդացե՛ք և որոշեցե՛ք ընդգծված գոյական անունների հոլովը. Արտագրեցե՛ք ստորոգյալի հետ։ Սեռական հոլովներն արտագրեցե՛ք գոյականի հետ։

Ցած իջավ Դավիթ Մարութա սարից,
Տեսավ՝ Կոզբադին իրենց տան միջին
Զափում է ոսկին թեզած առաջին,
Սյուդին, Զարխադին պարկերն են բռնել,
Զենով Օհանն էլ ելինքը ծռել,
Կանգնել է հեռու, ձեռները ծոցին:
Տեսավ, աչքերը արնով լցվեցին։
— Վեր կաց, Կոզբադին, հեռու կանգնիր դու,
Իմ հոր ոսկին է, ես եմ չափելու։
Կոզբադին ասավ.—Է՛յ, Զենով Օհան,
Կտաս՝ տուր խարջը էս յոթը տարվան.
Թե չէ կգնամ, միրուքս վկա,
Մսրա Մելիքին կպատմեմ, կգա,
Ձեր Սասմա երկիր քար ու քանդ կանի,
Տեղը կվարի, բոստան կցանի։
— Կորեք, անզգամ դուք Մսրա շներ,
Բա չե՞ք իմացել դուք Սասմա ծռեր...

*Մեռած եք կարծում դուք մեզ, թե՞ շվաք,*
*Կուզեք մեր երկիր դնեք խարՀի տակ...*
*Բարկացավ Դավիթ, չափը շպրտեց,*
*Տվավ Կոզբադնի գլուխը Ջարդեց։*
Զափի փերանքը *պատն անցավ, գնաց...*
*Մինչև օրս էլ դեռ գնում է թռած։*
*Ու երան թափած* ոսկին *թողեցին,*
*Հայոց* աշխարհից *փախան գնացին,*
Բադին, Կոզբադին,
Սյուդին, Զարխադին:

(Հ. Թումանյան. «*Սասունցի Դավիթ*»)

## XV. ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 182.—Գրեցե՛ք, թե ինչպիսի՞ առարկաներ ՀՆ. ընտրեցեք փակագծերում գրած բառերից հարմարը։*





*(Ջանասեր, ծույլ, մեծ, փոքր, սիրուն, բրդոտ, գիշատիչ խորամանկ)*

*Առարկայի* որպիսություն *կամ* հատկություն *ցույց տվող բառը կոչվում է* ածական անուն *կամ* ածական:

*Ածականը պատասխանում է* ինչպիսի՞, որպիսի՞, ո՞ր *հարցերին։*

*Օրինակ՝ (ինչպիսի՞) մեծ, փոքր, սիրուն, ջանասեր, չար, գիշատիչ, բրդոտ, խորամանկ։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 183.—Կարդացե՛ք և ցույց տվեք* որպիսություն *կամ* հատկություն *ցույց տվող բառերը՝* ածականները:

*Արծիվը կանգնեց սեղ ժայռի գլխին՝*
*Հանգիստ ու հպարտ նայում է չորս դին։*

Ցածն ամպեր ճերմակ լողում են ձորում,
Վերևում վճիտ եթերն է ծորում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 184.—Տրված գոյականների համար առաջ՝ ածականներ և գրեցե՛ք։

| Ըստ նյութի | Ըստ ձևի | Ըստ համի |
|---|---|---|
| Փայտյա սեղան | կլոր գնդակ | . . . . շաքար |
| . . . . գրչակոթ | . . . . դաշտ | . . . . պղպեղ |
| . . . . դուռ | . . . . գետ | . . . . խինին |
| . . . . ափսե | . . . . լիճ | . . . . լիմոն |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 185.— Արտագրեցե՛ք ածականները և ցույց տվեք՝ ինչպիսի՞ հարցերի են պատասխանում։

## ԾԱՂԻԿ ԵՎ ՄԵՂՈՒ

Ծաղիկ.—Պստիկ մեղու,
Ճստիկ մեղու,
Աշխատասեր ու արի,

Ո՞ւր ես տանում,
Ի՞նչ ես անում
Փոշին դու իմ թերթերի։



Մեղու.— Կապույտ ծաղիկ, նուրբ ու նախշուն,
Բացված գարնան հովի հետ,
Ես քո հյութից մեղր եմ քաշում
Համով, հոտով, բուրավետ։
Առավոտից մինչ ուշ գիշեր
Շրջում եմ դաշտ ու այգի,
Զէ՞ որ ես էլ անդամ եմ ժիր
Մեր համերաշխ համայնքի։

(Մ. Կորյուն)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 186.—Որոշեցե՛ք վերևի ոտանավորում հանդիպող գոյականների հոլովը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 187.—Արտաղրեցե՛ք և ընդգծեցե՛ք ածականները։

## ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ

Աչքերդ կապույտ եթերի նման
Եվ հոգիդ շուշան,
Սիրտդ խորունկ ծով, ապնիվ, աննման,
Ընկեր Շահումյան։
Քայլդ գանգակի վսեմ մի զողանջ,
Թափանցել գիտեր
Եվ ոգևորել շնչառովն իր սքանչ
Վհատած սրտեր։
Խոսքդ չէր լոկ խոսք, այլ պատգամ հզոր,
Կայծակնող ու վառ,
Թշնամիներդ են մինչև այսօր
Քեզնից զողահար։

(Հ. Հակոբյան)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 188.—Կարդացե՛ք՝ կետերի տեղը համապատասխան ածականներ դնելով։

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

Հե՛յ ջան . . . . . (ինչպիսի՞) Հոկտեմբեր։
. . . . . (ինչպիսի՞) ամիս խնդաբեր,
Մանուկներից ողջույն քեզ,
. . . . . (ինչպիսի՞) վարդերի փունջը քեզ։
(կարմիր, պայծառ, ալ)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 189.—Արտագրեցե՛ք գոյականները և որոշեցե՛ք նրանց հոլովը. գոյականների հետ արտագրեցե՛ք նաև եղած ածականները։

Օրինակ՝ Ոսկե շողով (գործիական)։

## ԳԱՐՈՒՆՆ ԵԿԱՎ

Գարունն եկավ ոսկե շողով։
Անձրև տեղաց գոհար ցողով։
Ծաղկեց հողը ջերմ ծիծաղով.
— Գա՛լդ բարի, անո՛ւշ գարուն։

Հավքերն եկան երամ կապած։
Հողի ծոցում ծիլը ժպտաց։
Հանդ ու արտում երգը թնդաց.
— Գա՛լդ բարի, անո՛ւշ գարուն։

Ծառերն հագան կանաչ շապիկ։
Ճյուղին հազար-հազար ծիծիկ,
Ծլվլացին ծափիկ-ծափիկ.
— Գա՛լդ բարի, անո՛ւշ գարուն։

(Մ. Կոբյուն)



# XVI. ԲԱՅ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 190.—Կետերի տեղը գրեցե՛ք, թե ինչ է անում Սուրենը։



Սուրենը . . . Սուրենը . . . Սուրենը . . .

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 191.—Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք առարկայի գործողություն ցույց տվող բառերը։

Պատմեցե՛ք և գրեցե՛ք նկարի բովանդակությունը։



## ՆԱՄԱԿ ՄԱՅՐԻԿԻՆ

Այսօր խարուսյկ վառեցինք,
Շուրջը ուրախ պարեցինք,
Արտոն ելավ մեծ ժայռին,
Արտասանեց «Ստալին»։
Մարոն երգեց «Աբովյան»,
Արան երգեց «Երևան»,
Ես էլ «Մայրիկ» երգեցի,
Կարոտով քեզ հիշեցի...

(Սարմեն)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 192.– Ուշադիր կարդացե՛ք, պատմեցե՛ք, արտադրեցե՛ք առարկայի գործողություն ցույց տվող բառերը։

## ԵՐՋԱՆԻԿ ՕՐԸ

—Այժմ խոսք տանք Միշա Կուլեշովին, «Կարմիր ճառագայթ» կոլխոզի հորթերի շեֆին։

Ոտիս տակ աթոռակ դրին, և ես սկսեցի պատմել, թե ինչպե՛ս ենք շեֆություն վերցրել և ինչքա՛ն հորթ ենք աճեցրել։ Երբ ասացի, որ ստացվել են տասնութ հորթ, տասը մտրուկ և մի զույգ նժույգ Սովետական Բանակի համար, բոլորն սկսեցին ծափահարել։ Ես պատմեցի նաև այն մասին, թե ինչպես եմ սովորում, քանի՞ հինգ թվանշան ունեմ, և այն մասին, թե մենք ինչ ենք անում պիոներական ջոկատում։

Երբ վերջացրի, ընկեր Վորոշիլովը սեղմեց իմ ձեռքը և ժպտալով ասաց.

—Կեցցե՛ս, քո նժույգները կվերցնենք։

Իսկ ընկերը Ստալինը գրկեց ինձ, վերցրեց ձեռքերի վրա և դրեց աթոռին։ Նա ամուր սեղմեց իմ ձեռքը։

Ես դեռ այնպես երջանիկ չեմ եղել, ինչպես այդ երեկո։

(Պիոներ Միշա Կուլեշովի պատմածից)

> Առարկայի գործողություն կամ դրություն, վիճակ ցույց տվող բառերը կոչվում են բայ. օրինակ՝ ծափահարել, վերցնել, գտնվել։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 193.—Կարդացե՛ք և պատմեցե՛ք, գտեք բայերը։

## ԺՈՂՈՎՐԴԻ ՍԵՐԸ

Մոսկվայի Գորկու փողոցի վրա գտնվում է Սովետական Միության Ռևոլյուցիայի թանգարանը։

Այդ թանգարանում են պահում ժողովուրդների մեծ Առաջնորդ ընկեր Ստալինին ուղարկված բոլոր նվերները։ Բազմաթիվ են Առաջնորդին ուղարկված նվերները։ Նա, ով տեսնում է դրանք, զգում է ամբողջ աշխարհի աշխատավորության սերը դեպի իր Առաջնորդը և հեռանում է թանգարանից լի երջանկությամբ, որ ապրում է Ստալինյան արևի տակ։

> Բայերը պատասխանում են ի՞նչ անել, ի՞նչ լինել, ի՞նչ է անում, ի՞նչ է լինում, ի՞նչ արավ, ի՞նչ եղավ, ի՞նչ կանի, ի՞նչ կլինի և այլ հարցերի։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 194.—Կարդացե՛ք ոտանավորը, արտագրեցե՛ք բայերը։

## ՎԻԼԻԿԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Փոքրիկ Վիլոն միշտ խնդրում էր
Մի ծաղկաման մայրիկից,
Մի ծաղկաման ու ծաղկի սերմ
Պահանջում էր հայրիկից.
—Որ ձմեռն էլ ծաղիկ ցանեմ,
Տվեք ինձ մի ծաղկաման,
Մի ծաղկաման ու ծաղկի սերմ
Պիտի գտնեք անպայման,
Չէ՞ որ ձմռան ցուրտ ժամանակ
Դաշտում ծաղիկ չեմ գտնի,
Բայց ձմռանն էլ մեր տունը տաք
Նա կմնա կենդանի...

(Հ. Շիրազ)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 195.—Արտագրեցե՛ք այն բայերը, որոնք ցույց են տալիս թռչունի գործողությունը։

Կանչել, աղաղակել, սլանալ, ծրվլալ, երգել, բառաչել, խաղալ, գեղգեղել, թռչել, փախչել, ածել, մարտնչել, հափշտակել, կերակրել, փայլել, պառկել, նստել, կանգնել, հրամայել, պատասխանել, գուրգուրել։

Օրինակ՝ թռչունը գեղգեղում է...

> Բայերը նախադասության մեջ լինում են ստորոգյալ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 196. —Կարդացե՛ք, պատմեցե՛ք, գտե՛ք այն բայերը, որոնք գործածվում են որպես ստորոգյալ։

## ԳԱՐՈՒՆ

Աչքը բացեց զուլալ առուն,
Տեսավ՝ դրսում տաք է, գարուն...
Տեսավ՝ գարնան այդ վաղ պահին
Ծառ են տնկում իր ափերին։
Տեսավ՝ ուրախ հավք ու թռչուն,
Գեղգեղում են, իրար կանչում։
Աշխատանքով ժիր ու եռուն,
Տեսավ՝ դուրս է եկնում մեղուն...
Տեսավ մանկանց նա կարմրաթուշ,
Որ խաղում են, երգում անուշ։
Տեսավ՝ մարդիկ ջահել ու ծեր
Խանդավառված դաշտ են լցվել։



Տեսավ՝ դաշտում կոլխոզական
Վար են անում տրակտոր, գութան,
Նայեց երկար, ժպտաց առուն,
Ինքն էլ հոսեց-վազեց հեռուն։

(Վ. Գրիգորյան)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 197.—Հետևյալ բայերով կազմեցե՛ք նախադասություններ.

Լսել, խոսել, կարդալ, վազել, հերկել, երգել, գալ, գնալ։

## XVII. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 198.—Ո՞ր գոյականների փոխարեն է գործում Վահանը ես և դու բառերը։

Գուրգենը հարցրեց փոքրիկ Վահանին.
—Ռադիոն ո՞վ է միացրել։
Վահանն ասաց՝ ես։
Գուրգենը նորից հարցրեց Վահանին.
—Իսկ ո՞վ է գնել։
Վահանն ասաց՝ դու։

Ես, դու, նա, մենք, դուք, նրանք բառերը կոչվում են անձնական դերանուն։

Այս անձնական դերանունները նախադասության մեջ լինում են ենթակա։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 199.—Կազմեցե՛ք նախադասություններ՝ ես, դու, նա, մենք, դուք, նրանք դերանունները գործածելով որպես ենթակա։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 200.—Գրեցե՛ք անձնական դերանունները և նրանց հետ կապված ստորոգյալները։

## ՍՏԱԼԻՆԻ ՆԿԱՐԻ ԱՌԱՋ

*Ես կանգնած եմ պատկերիդ դեմ*
*Եվ նայում եմ, նայում անվերջ,*
*Եվ իմ գալիք կյանքն եմ տեսնում*
*Քո խորն ու ջինջ աչքերի մեջ։*
*Եվ կարծես թե ամեն անգամ*
*Դու ժպտում ես ու ինձ ասում.*
*—Լավ սովորիր, խելոք բալիկ,*
*Որ չմնաս դու անուսում։*

(Գ. Աբրահամյան)



# XVIII. ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

## Արմատ եվ ածանց

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 201.—Արտագրեցե՛ք՝ արմատը բաժանելով գծերով. գտե՛ք՝ ո՞ր մասն է արտահայտում բառի հիմնական իմաստը։*

*Ընկուզենի տեսա ես՝*
*Մեր չինարի ծառի պես,*
*Նման կանաչ վրանի.*
*Ու հղենի, ծիրանի,*
*Խնձորենի, ձիթենի,*
*Ու դեղձենի, տանձենի,*
*Սալորենի ու այսպես*
*Մեկը մեկից բարձր ու վեհ։*

(Հով. Նիրազ)

*Օրինակ՝ սալոր-ենի։*

Բառի հիմնական իմաստն արտահայտող մասը կոչվում է արմատ։ Օրինակ՝ ալոռենի բառի արմատն է ալոռ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 202. Գրեցե՛ք՝ ինչպես ասել սալորի ծառ, խնձորի ծառ, դեղձի ծառ, տանձի ծառ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 203.— Գրեցե՛ք՝ ինչպես ասել գույն չունեցող, համ չունեցող, հոտ չունեցող և այլն։

Այն մասնիկը, որ դրվելով արմատի առաջից կամ վերջից՝ նոր բառ է կազմում, կոչվում է ածանց. օրինակ՝ անդադար, հերոսական սալորենի և այլն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 204.— Հետևյալ բառերի վրա վերջից ավելացրե՛ք ություն ածանցը և գրեցե՛ք՝ ինչ նոր բառեր են ստացվում.

Բարեկամ, ընկեր, բանվոր, գյուղացի, աշակերտ, ուսանող, տնտես, բարձր, ցածր, գերադանց, խելոք, վարժ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 205.— Հետևյալ բառերի վրա ավելացրե՛ք եղեն ածանցը։ Ի՞նչ են նշանակում ստացված նոր բառերը։

Կանաչ, փայտ, արծաթ, հագուստ, կտոր, միրգ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 206.— Հետևյալ բառերի վրա ավելացրե՛ք ան ածանցը։ Ի՞նչ են նշանակում ստացված նոր բառերը.

Վախ, ցավ, լաց, տրտունջ, քաջ, նահանջ, մահ, պայման։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 207.— Կազմեցե՛ք նոր բառեր հետևյալ ածանցներով և բացատրեցե՛ք, թե ինչ են նշանակում ստացված բառերը.

դժ-, -անոց, -ուհի, -ակ, -իկ, -եղեն, -ություն, -ենի։

Արմատների կամ բառերի սկզբից դրվող ածանցները կոչվում են նախածանցներ, վերջից դրվողները կոչվում են վերջածանցներ. օրինակ՝ դժգոհ, գոհություն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 208.— Կարդացե՛ք հետևյալ բառերը և ցույց տվեք, թե վերջածանցները ինչ իմաստ են տալիս բառին։

| | |
|---|---|
| քաջ | քաջություն |
| միս | մսեղեն |
| տուն | տնակ |
| հարված | հարվածային |
| գյուղ | գյուղացի |
| գերադանց | գերադանցիկ |

Ածանց ունեցող բառը կոչվում է ածանցավոր բառ. ածանց չունեցողը կոչվում է պարզ բառ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 209.— Կազմեցե՛ք նախադասություններ՝ օգտագործելով ածանցավոր բառեր։

Օրինակ՝ Մեր դաշտերում աճում են նոտավետ ծաղիկներ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 210.— Փակագծերում գրված ածանցավոր բառերի օգնությամբ կազմեցե՛ք նախադասություններ։

(Քաջարար, փոքրիկ, անվախ, գերակատարել, կանաչեղեն, դառնություն, քաղցրություն, օդային, ենթարկել, արտաշնչել)։

Օրինակ՝ Փոքրիկ. Համոն լավ է սովորում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 211.— Կարդացե՛ք հետևյալ բառերը և ցույց տվեք, թե ածանցները ինչ նոր իմաստ են տալիս բառին.

| | |
|---|---|
| շնչել | արտաշնչել |
| կատարել | գերակատարել |
| գույն | դժգույն |
| հանել | արտահանել |
| գործ | անգործ |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 212.—Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք բառերի արմատները. արտագրեցե՛ք պարզ և ածանցավոր բառերն առանձին-առանձին։

## ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՐԳ

Ազատ ու անծայր
Մեր հայրենիքում
Նորից շինարար
Մուրճերն են զնգում։

Հաղթել ենք մարտում,
Երգում ենք, խնդում,
Հայրենի հողին
Արև ենք մաղթում։

Դաշտերի ոսկի
Հասկերն ենք հնձում,
Պայծառ գալիքի
Ճամփան ենք բացում։

(Սարմեն)



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 213.—Արտագրեցե՛ք միայն վերջածանց ունեցող բառերը։

Դպրոցական գրադարանում կան շատ հետաքրքրական գրքեր։ Աշակերտական հավաքույթում ելույթ ունեցավ մեր դպրոցի դերազանցիկ աշակերտ Մարկոսյանը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 214.—Փակագծերի մեջ եղած ածանցների օգնությամբ կազմեցե՛ք բառեր.

(ական, ակ, ություն, ացի, իչ, պես)։

## XIX. ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 215.—Կարդացե՛ք վարժությունը և ցույց տվեք, թե ընդգծված բառերը քանի՞ արմատից են կազմված։

Սովետական Միության մայրաքաղաքը Մոսկվան է։ Սովետական Միությունը ունի անհամար ինքնաթիռներ և ատոմաթափ. մարդատար ու ռազմական զրահապատ նավեր։ Օտարերկրյա ոչ մի սուզանավ չի համարձակվում մտնել մեր ջրերը։ Անպարտելի է Սովետական Միությունը, որովհետև նրան ղեկավարում է Լենինի-Ստալինի մեծ պարտիան։

Այն բառերը, որոնք կազմված են լինում երկու և ավելի բառերից կամ արմատներից, կոչվում են բարդ բառեր:

Օրինակ՝ մայրաքաղաք բառը կազմված է մայր և քաղաք արմատներից։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 216.—Կազմեցե՛ք նախադասություններ փակագծերում գրված բառերի օգնությամբ։

(Լուսամուտ, գրատախտակ, չափահաս, ձյունապատ, ծաղկապատ, գարնանամուտ, մորեղբայր, հորեղբայր)։

Օրինակ՝ Մեր դպրոցի լուսամուտները միշտ մաքուր են։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 217.— Հետևյալ բառերի արմատներից կազմեցե՛ք բարդ բառեր.

| | |
|---|---|
| տրև | ծալել |
| լույս | արձակել |
| ական | նետել |
| մարդ | սիրել |
| հուր | շիջել |
| նավ | վարել |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 218.—Կարդացե՛ք և արտագրեցե՛ք բարդ բառերը.

## ԿԵՆԴԱՆԱԾԻՆ ՁՈՒԿ

Ձկները բազմանում են ձկնկիթով։ Սակայն կան հազվագյուտ ձկներ, որոնք ձկնկիթ չեն թափում, այլ կենդանի ձկներ են ծնում։ Նրանք կոչվում են կենդանածին ձկներ։ Նրանցից մի քանիսը ծնում են մինչև 300 ձկնիկ։ Նրանք գլխավորապես ապրում են հյուսիսային բևեռային ջրերում։ Սպիտակ և Բալթիկ ծովերում էլ են լինում կենդանածին ձկնիկներ՝ մինչև քսաներեք սանտիմետր երկարությամբ։

## XX. ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ա) ՆՈՒՅՆԱՆԻՇ ԲԱՌԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 219.—Արտագրեցե՛ք հետևյալ բառերը այնպես, որ միևնույն իմաստն ունեցող բառերը իրար հաջորդեն.

Այտ, շրթունք, մազ, պատուհան, թուշ, շուրթ, հեր, երես, վարս, լուսամուտ։

Իմաստով նույն բառերը կոչվում են նույնանիշ բառեր։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 220.— Կետերի տեղը դրե՛ք միևնույն իմաստը ունեցող բառեր։

գնալ . . . . . վաճառել . . . . . վիզ . . . . անիվ . . . . . երկյուղ . . . . . ուղի . . . .

(երթալ, ծախել, պարանոց, ակ, վախ, ճանապարհ)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 221.—Դասե՛ք նույնանիշ գոյականները և արտագրեցե՛ք։

լեռ . . . . . աքլոր . . . . թուր . . . . պատուհան . . . . . ծամ . . . . մարտ . . . . ։

### բ) ՀԱՄԱՆԻՇ ԲԱՌԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 222.—Արտագրեցե՛ք իմաստով իրար մոտիկ հետևյալ բառերը հաջորդաբար.

շինել, սքանչանալ, կառուցել, հիանալ, վերջ, մութ, խավար, վախճան։

Այն բառերը, որոնք իմաստով իրար նման են և գործածությամբ են տարբերվում, կոչվում են համանիշ բառեր։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 223.— Նախադասություններ կազմեցեք հետևյալ համանիշ բառերով.

հեծնել, նստել, ոհմակ, երամ, հոտ, նախիր, բխել, հոսել, խայթել, կծել, փակել, ծածկել, կողպել։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 224.—Ցույց տվեք, թե հետևյալ համանիշ բառերն ինչպիսի՞ պարագաներում են գործածվում.

զուլալ, մաքուր, պարզ,
փայլել, պսպղալ, շողշողալ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 225.— Ի՞նչ տարբերություն կա հետևյալ համանիշ բառերի միջև.

գեփյուռ, քամի, հով, հողմ.
մեծ, հսկա, ահագին, վիթխարի։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 226.— Արտագրեցե՛ք հետևյալ բառերը՝ դնելով նրանց համանիշները.

լրագիր, կռիվ, թռչել, նուրբ, հիվանդ, անհետանալ (տկար, թերթ, պատերազմ, սավառնել, ճախրել, քնքուշ, կորչել)։

գ) ՆՈՒՅՆԱՆՈՒՆ ԲԱՌԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 227.—Արտագրեցե՛ք հետևյալ նախադասությունները և ընդգծեցե՛ք այն բառերը, որոնք միևնույն գրությունն ունեն.

Կոլտնտեսության ոչխարի հոտը բաղկացած է մի քանի հազար գլուխ ոչխարներից։
Մեր լեռների ծաղիկների հոտը քաղցր է ու անուշ։
Սովետական Հայրենիքի սերը ոչնչով չեն փոխարինի։
Կաթի սերը համով է։

Այն բառերը, որոնք իմաստով միանգամայն տարբեր են, իսկ գրությամբ՝ նման, կոչվում են նույնանուն կամ համանուն բառեր:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 228.—Ինքներդ ասացե՛ք մի քանի նույնանուն բառեր և գրեցե՛ք նրանց նշանակությունը։

Օրինակ՝ այր=մարդ, քարայր։



դ) ՀԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 229.—Արտագրեցե՛ք հետևյալ վարժությունը և ընդգծեցե՛ք իրար հակառակ իմաստ ունեցող բառերը.

Բուրժուական երկրներում բանվորներն ապրում են մութ, ցուրտ և կեղտոտ ընակարաններում։ Իսկ մեզ մոտ՝ սոցիալիզմի երկրում, բանվորներն ապրում են մաքուր, տաք և լուսավոր ընակարաններում։

Իմաստով միանգամայն միմյանց հակադիր բառերը կոչվում են հակասիթ բառեր:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 230.—Արտագրեցե՛ք և կետերի տեղը դնե՛ք իրար հականիշ գոյականներ։

Գիշեր . . . . , մուտք . . . . , մաքրություն . . . . . ,
լույս . . . . , պատերազմ . . . . , բարություն . . . . ։

(ցերեկ, ելք, կեղտոտություն, մութ, խաղաղություն, չարություն)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 231.—Գտե՛ք հականիշ բառեր և գրեցե՛ք տետրում։

Վնաս, սկիզբ, առողջություն, ծուլություն, ծերություն, սպիտակ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 232.—Արտագրեցե՛ք և միմյանց մոտ դասավորեցե՛ք հականիշ բառերը։

Կարճ, հաստ, երկար, բարակ, մոտիկ, դանդաղ, հեռու՝ արագ, լավ, գեղեցիկ, տգեղ, վատ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 233.—Վերոհիշյալ բառերի օգնությամբ կազմեցեք նախադասություններ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 234.—Արտագրեցե՛ք և ցույց տվեք, թե ամեն մի նախադասության մեջ ինչ իմաստով է գործածվում սուր բառը:

1. Գեղամը սուր դանակ ունի (իսկական իմաստով):
2. Մարգոն սուր հիշողություն ունի:
3. Սուր լեզու ունի Հակոբը:

Միևնույն բառը, տեղին նայելով, կարող է հաճախ մի քանի նշանակություն ունենալ, տարբեր առումներով գործածվել:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 235.—Կարդացե՛ք հետևյալ վարժությունը և ցույց տվեք բառերի առումները:

Պողպատակուռ հերոսները պահպանում են Սոցիալիստական Հայրենիքի սահմանները: Մեր երկաթաթև բազեները բոլորից արագ, բոլորից բարձր են թռչում: Սովսրեցե՛ք մոքով հեռու սավառնել, ձեր գլուխը չծուեք ոչ մի դժվարության առաջ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 236.—Հետևյալ բառերը գործածեցե՛ք տարբեր նախադասությունների մեջ զանազան առումներով.

Հստակ, պարզ, հասուն, քաշել, ծաղիկ, վառ, դալար:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 237.—Ինքներդ ասացե՛ք բառեր և գործածեցե՛ք տարբեր նախադասությունների մեջ զանազան առումներով:



Բառերը գործածվում են ոչ միայն իրենց բուն կամ հիմնական իմաստով, այլև ուրիշ բառերի իմաստով, օրինակ՝ սուր դանակ, բայց և սուր խոսք:

Եթե բառը ուրիշ բառի իմաստով է գործածվում, նա ստանում է փոխաբերական իմաստ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 238.—Հետևյալ օրինակի մեջ ցո՛ւյց տվեք՝ միևնույն բառը բո՞ւն, թե՞ փոխաբերական իմաստով է գործածված:

| | |
|---|---|
| Փայլուն աստղ: | Ծանր քար: |
| Փայլուն միտք: | Ծանր խոսք: |
| Սայլի ակ: | Խակ խնձոր: |
| Արևի ակ: | Խակ միտք: |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 239.—Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք փոխաբերական իմաստով գործածված բառերը:

| | |
|---|---|
| Ծաղկում է ծառը: | Ծաղկում է կոլտնտեսությունը: |
| Պողպատյա ձող: | Պողպատյա կամք: |
| Անկոտրում փայտ: | Անկոտրում կամք: |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 240.—Ինքներդ մտածեցե՛ք համեմատություններ և գրի՛ առեք հետևյալ օրինակների ձևով:

Սովետական Միությունը, որպես մի անառիկ բերդ, անսասան է և ամուր: Գրանիտի նման ամուր են Սոցիալիստական Հայրենիքի սահմանները:

Արծվի պես սուր տեսողություն ունի Մինասը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 241.—Լրացրե՛ք հիշյալ նախադասությունները՝ համապատասխան համեմատություններ դնելով:

. . . . . որպես ձյուն . . . . . որպես լեռ . . . . . ինչպես հողմ . . . . . ինչպես լույս:

(պայծառ, սրընթաց, անշարժ, սպիտակ)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 242.—Կարդացե՛ք և ցո՛ւյց տվեք պատկերավոր արտահայտությունները:

## Մ Ա Ր Տ

Ա՜խ, այսպես էլ գիժ ամի՜ս,
Մարդու հանգիստ չի տալիս։
Այսօր ուրախ օր կանի,
Վաղը՝ անձրև ու քամի,
Առավոտը՝ պայծառ օդ,
Կեսօրը՝ մութ ու ամպոտ։
Մին հագնում է սպիտակ,
Մին կանաչին է տալիս,
Մի օր ցուրտ է, մի օր տաք,
Մին խնդում է, մին լալիս...
Ա՜խ, այսպես էլ գիժ ամի՜ս։

(Հ. Թումանյան)



## XXI. ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 243.—Արտադրեցե՛ք՝ մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը, տասը, տասնմեկ, տասներկու, տասներեք, տասնչորս, տասնհինգ, տասնվեց, տասնյոթ, տասնութ, տասնինը, քսան, քսանմեկ, քսաներկու, քսաներիք...

Երկանիշ թվերը գրվում են միասին, մյուս թվերը գրվում են առանձին.

Օրինակ՝ մեկ, ինը, տասնհինգ, քառասունհինգ, բայց՝ երկու հարյուր քառասունհինգ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 244.—Շարունակեցե՛ք՝ երեսունմեկ . . . . հիսունմեկ . . . .

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 245.—Շարունակեցե՛ք՝ վաթսունմեկ . . . յոթանասունմեկ . . . . ութսունմեկ . . . . իննսունմեկ . . .

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 246.—Արտադրեցե՛ք՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ, ութերորդ, իններորդ, տասներորդ, տասնմեկերորդ, տասներկուերորդ, տասներեքերորդ, տասնչորսերորդ, տասնհինգերորդ, տասնվեցերորդ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 247.—Գրեցե՛ք բառերով 3, 7, 9, 11, 17, 19, 27, 33, 38, 41, 50, 51, 66, 69, 70, 71, 77, 80, 83, 89։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 248.—Գրեցե՛ք բառերով՝ 1340, 2346, 478, 569, 674։

Բ—Փ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 249.—Սովորեցե՛ք հետևյալ բառերը, որոնց մեջ գրվում է բ, բայց արտասանվում է փ։

Արտագրեցե՛ք այբբենական կարգով։

| | | | |
|---|---|---|---|
| սրբիչ | հարբուխ | խաբե, | շաբաթ |
| որբ | հարբեցող | խաբեբա | ուրբաթ |
| նրբանցք | երեսսրբիչ | Հակոբ | Սերոբ |
| նուրբ | երբեմն | իբրև | սրբել |
| հարբել | երբևէ | | |

Հետևյալ բառերում r-ից հետո գրվում է ի, բայց չի արտասանվում կամ թույլ է արտասանվում։

| | | |
|---|---|---|
| աշխարհ | ճանապարհ | նիրհել |
| խորհուրդ | խոնարհ | ապաշնորհ |
| արհամարհել | շնորհք | խորհրդատու |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 250.—Կազմեցե՛ք նախադասություններ և գործածեցե՛ք վերևում բերված բառերը։

Օրինակ՝ Ուսուցիչը խորհուրդ է տալիս աշակերտին։

## Ջ—Չ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 251.—Սովորեցե՛ք հետևյալ բառերը, որոնց մեջ գրվում է չ, բայց արտասանվում է շ։

Արտագրեցե՛ք այբբենական կարգով։

| | | | | |
|---|---|---|---|---|
| արջ | երջանիկ | զղջալ | առողջ | խոխոջյուն |
| արջառ | վերջ | եղջյուր | եղջերու | մարմաջ |
| որջ | միջատ | հղջիկ | ամբողջ | վայրէջք |
| թրջել | աջ | ողջույն | ողջունել | իջնել |
| աղջիկ | միջոց | միջակետ | շեղջ | միջնորդ |
| մրջյուն | վերջին | աղջամուղջ | գեղջկուհի | Նախիջևան |
| լուրջ | ոջիլ | | | |



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 252.—Կազմեցե՛ք նախադասություններ, գործածելով վերևում բերված բառերը։

Օրինակ՝
Մեր դասարանում կան աղջիկներ։

## Ձ—Ճ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 253.—Սովորեցե՛ք հետևյալ բառերը, որոնց մեջ գրվում է ձ, բայց արտասանվում է ց։

Արտագրեցե՛ք այբբենական կարգով։

| | | |
|---|---|---|
| բարձր | փորձ | դեղձ |
| աշխատավարձ | դերձակ | դաղձ |
| արձագանք | արձանագրություն | բարձր |
| դարձյալ | խուրձ | փորձանք |
| բարձունք | փորձառու | լորձ |
| արձակ | արձակուրդ | հորձանք |
| համարձակ | դարձ | վրձին |
| բացարձակ | օձ | մերձավոր |
| դարձվածք | որձ | իղձ |
| Համբարձում | վարձկան | դեղձանիկ |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 254.—Նախադասությունների մեջ գործածեցե՛ք վերևի բառերը։

Օրինակ՝ Ամառները մենք արձակուրդ ենք ունենում։

## Դ—Թ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 255.—Սովորեցե՛ք հետևյալ բառերը, որոնց մեջ գրվում է դ, բայց արտասանվում է թ։

Արտագրեցե՛ք այբբենական կարգով։

| | | |
|---|---|---|
| արդար | օդ | որդի |
| մարդ | նախորդ | թակարդ |
| բերդ | Աղամ | ընդհատել |
| զարդ | հորդորել | որսորդ |
| արդեն | կենդանի | ճանապարհորդ |
| երբորդ | ժողովուրդ | չորրորդ |
| լյարդ | խնդիր | հինգերորդ |
| կարդալ | դադար | անդրդվելի |
| մարդիկ | բուրդ | անցորդ |
| երդիկ | խորհուրդ | ջարդել |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 256.—Նախորդ բառերը գործածեցե՛ք նախադասությունների մեջ։

Օրինակ՝ Մեր երկրի ժողովուրդների կամքն անդրդվելի է։

## Գ—Ք

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 257.—Սովորեցե՛ք հետևյալ բառերը, որոնց մեջ գրվում է գ, բայց արտասանվում է ք։

Արտագրեցե՛ք այբբենական կարգով։

| | | |
|---|---|---|
| թարգմանիչ | Գևորգ | Մարգարիտ |
| երգիչ | հագնել | մարագ |
| կարգապահություն | հոգնել | շոգ |
| պարգևատրել | օգնել | օգուտ |
| Մարգար | զուգվել | Մարգիս |
| անհոգ | հազուստ | նորոգել |
| ձգել | միրգ | ձագ |
| | ոգի | ուրագ |



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 258.—Վերևի բառերը գործածեցե՛ք նախադասության մեջ։

Օրինակ՝ Ավագը հագել է նոր կոշիկ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 259 —Արտագրեցե՛ք ստանավորը և գծերի տեղը դրե՛ք համապատասխան տառը։

## Գ Ա Ր Ո Ւ Ն

Զու—վել են կրկին
Անտառ ու այ—լ,
Վշշում է ուժգին
Զուրը գետակի։

Հավ—երը սիրուն
Կազմել են համեր—,
Արտում ու դաշտում
Հորովել ու եր—։

Թիթեռներն ուրախ
Թռչում են դես-դեն...
Ջան, տեսքիդ մատաղ,
Գարուն է ար—են։

(Հ. Հայրապետյան)

## Ղ—Խ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 260.—Սովորեցե՛ք հետևյալ բառերը, որոնց մեջ գրվում է ղ, բայց արտասանվում է խ։

| | | |
|---|---|---|
| աղբ | մաղձ | ողկույզ |
| աղքատ | ողբ | փեղկ |
| թուղթ | ողջ | քաղցր |
| հաղթել | ուլտ | կողպեք |
| խեղդել | կեղտ | եղբայր |
| դեղձ | շղթա | շողք |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 261.—Նախադասությունների մեջ գործածեցե՛ք վերևի բառերը։

Օրինակ՝ Մեր Սովետական Հայրենիքում հաղթանակել է սոցիալիզմը։

## ԵՐԿՀՆՉՅՈՒՆՆԵՐ ԵՎ Յ ՁԱՅՆԱԿԱՊԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 262.—Արտագրեցե՛ք այ, ոյ, ույ, յա, յո, յու երկհնչյուններ ունեցող բառերը և գրեցե՛ք այն բառերը, որոնց մեջ ձայնավորից հետո լսվում է յ, բայց չի գրվում։

## ՓԱՌԱՊԱՆԾ ԿՈՄԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Մարտի 29-ին Մոսկվայում նորից մեծ ուրախություն էր տիրում։ Միշտ այդպես է Մոսկվան։ Երբ շատ հյուրեր է ունենում, ավելի ուրախ է լինում. իսկ այս անգամ շատ սիրելի և պատվելի հյուրեր եկան Մոսկվա։ Եկան մեր տասնվեց ռեսպուբլիկաների քաղաքներից ու գյուղերից, մեր անծայրածիր երկրի բոլոր անկյուններից։ Նրանց մեջ կային ռուսներ, ուկրաինացիներ, ուզբեկներ, վրացիներ, հայեր... բոլոր, բոլոր ազգությունները, բոլոր ռեսպուբլիկաներն ու մարզերն իրենց ներկայացուցիչներն էին ուղարկել Մոսկվա։



Եվ ինչ եք կարծում՝ ինչ հյուրեր էին դրանք։

Դրանք կոմերիտմիությունի 11-րդ հոմագումարի դելեգատներն էին։ Կոմերիտմիությունն իր շարքերից ընտրել էր լավերից լավերին, ուղարկել նրանց Մոսկվա, որպեսզի գնան և հոմագումարի ամբիոնից պատմեն Լենինյան-Ստալինյան փառապանծ կոմերիտմիությունի հերոսական գործերի մասին։

---

Հմայակը կոմերիտականների հերոսությունները պատկերող մի վեպ տվեց Կարոյին և հանձնարարեց նրան կարդալ այդ գիրքը։

— Իսկույն կսկսեմ գրքի ընթերցանությունը։

Գիրքը շատ հետաքրքրական էր. Կարոն մեկ օրվա ընթացքում ավարտեց ընթերցանությունը և գրքի բովանդակությունը պատմեց Սեդային։

Սեդան նույնպես խնդրեց Հմայակից այդ գիրքը։

Երբ նա գիրքը վերադարձրեց, Հմայակը հարցրեց նրան.

— Քեզ ինչպես դուր եկավ, լա՞վ գիրք էր։

— Հիանալի էր, ես մինչև այժմ այդպիսի լավ գիրք չէի կարդացել,—պատասխանեց Սեդան, շնորհակալություն հայտնեց և դասարան մտավ գրքի բովանդակությունը իր ընկերուհիներին պատմելու որոշումով։

Ց ձայնակապը կամ երկու ձայնավորների միջև լսվող յ-ն գրվում է միայն ա և ո ձայնավորից հետո, իսկ մյուս ձայնավորներից հետո չի գրվում։

Օրինակ՝ գոյական, կայարան, ծիածան, էինք և այլն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 263.—Սովորեցե՛ք հետևյալ բառերի գրությունը։

Արտագրեցե՛ք այբբենական կարգով։

| | | |
|---|---|---|
| միասին | կրիա | քիմիա |
| պիոներ | Մարիամ | Անգլիա |
| միություն | ձիավոր | պրոլետարիատ |
| հիանալի | միայն | Դանիել |
| թիակ | լիություն | |
| ծիածան | սոցիալիզմ | |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 264.— Վերևի բառերը գործածեցե՛ք նախադասության մեջ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 265.—Սովորեցե՛ք հետևյալ բառերի գրությունը։

Արտագրեցե՛ք այբբենական կարգով։

Մյուս, հույս, լույս, փայտյա, եղբայր, բույր (հոտ), համբույր, արյուն, բյուր (շատ), յոթ, հայր, դոյական, քույր, համաձայն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 266.—Արտագրեցե՛ք այն բառերը, որոնք ունեն երկհնչյուններ ու ձայնակապ, և այն բառերը, որոնց մեջ ձայնակապը լսվում է, բայց չի գրվում։

## ՎԱՂԿԱ ՀԵՐՈՍԸ

Մի անգամ Վաչիկն ու քույրը հայրիկի հետ կինո գնացին։ Ցուցադրում էին «Երիտասարդ գվարդիա» նկարը։

Վաչիկը շատ էր լսել պատանի հերոսներ Օլեգ Կոշևոյի, Սերգեյ Տյուլենինի, Ուլյանա Գրոմովայի, Ժորա Հարությունյանցի և մյուսների մասին ու շատ էր սիրում նրանց։ Իրենց պիոներական ջոկատն էլ հենց կոչվում էր «Օլեգ Կոշևոյի անվան № 1 ջոկատ»։ Իր մահճակալի ետևի պատի վրա շարքով փակցրել էր հերոսների նկարները։

Կինոնկարում նա բոլորին ճանաչում էր, մեկ-մեկ ցույց էր տալիս. «Հայրիկ, այ, Օլեգը, այն ակնոցավորն էլ Զեմնուխովն է։ Սերգեյ Տյուլենինը, նայիր, հայրիկ, Վալյայի հետ գնում է ֆաշիստների շտաբը հրդեհելու։ Այն փոքրիկն էլ Ցուրկինն է»։

Հայրը ժպտում էր ու շոյում աղայի գանգուրները։

Երբ կինոնկարը վերջացավ, և դահլիճը լուսավորվեց, հայրը տեսավ, որ Վաչիկը լաց է լինում։

— Հանգստացիր, Վաչիկ, պիոները լաց չի լինի,— ասաց նա։

— Ես հո լաց չեմ լինում, հայրիկ։ Բարկությունս այն վախկոտի վրա եկավ։ Ա՛խ, մի ձեռս ընկներ։ Թե ես Օլեգի տեղը լինեի... Ինչպես է, որ նա չի ճանաչել այդ նապաստակին։ Իսկ ես կճանաչեի, հայրիկ, ազնիվ պիոներական խոսք, հենց աչքերից կճանաչեի, որ նա վախկոտ է, և գվարդիայի մեջ չէի ընդունի...

Երբ տուն հասան, նա կանչեց մայրիկին ու քրոջը՝ Վարդուհուն և երկար, երկար պատմում էր գվարդիականների մասին։

## XXII. ԿՐԿՆՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 267.—Գտե՛ք յուրաքանչյուր նախադասության ենթական և ստորոգյալը։

## ԿՈՄԲԱՅՆ

Շատ սովխոզներում ու կոլխոզներում հացը հավաքում են կոմբայնով։

Կոմբայնը մի մեքենա է, որ և՛ հնձում է, և՛ խուրձեր կապում, և՛ ծեծում է, և՛ քամնարում։ Նրան դաշտով քաշում է տրակտորը։ Կոմբայնի թևերը հասկերը կռացնում են և մոտեցնում երկար դանակին։ Դանակը կտրում է։ Կտրած ցորենը մեքենան ինքը հավաքում է և ածում կալսիչ թմբուկի մեջ։ Հասկը այնտեղ ծեծվում է. հացահատիկը դարմանից քամվում է ու թափվում մի առանձին բաքի մեջ, իսկ դարմանը՝ դուրս։ Երբ բաքը լցվում է, կոմբայնը կանգնում է։ Մոտենում է բեռնակիր ավտոն։ Բաքի դուռը բացվում է, և ցորենը արագ թափվում է ավտոյի մեջ։

Բաքը դատարկվելուց հետո կոմբայնը շարունակում է աշխատել։

Կոմբայնը մեծ օգուտ է տալիս։ Փիչ մարդկանցով շատ գործ է կատարում, հացահատիկը դաշտից շուտ է հավաքում, և կորուստ չի լինում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 268.—Գտե՛ք գոյականները։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 269.—Գտե՛ք ներգոյական հոլովով գործածված գոյականները։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 270.—Գտե՛ք սեռականով գործածված գոյականները։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 271.—Գտե՛ք ուղղականով և բացառականով գործածված գոյականները։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 272. Գտե՛ք տրականով, հայցականով և բացառականով գործածված գոյականները։



## ՎԻՐԱՎՈՐԻՆ ՓՐԿԵՑ

Հայրս գնաց ռազմաճակատ։ Տանը մնացել էինք մայրը, ես և փոքր քույրս։ Երբ գերմանացիները գրավեցին մեր Կլին քաղաքը, ես մերոնց հետ գնացի գյուղ, տատիկիս մոտ։ Բայց այնտեղ էլ եկան գերմանացիները։

Մի երեկո ես դուրս եկա փողոց և հանկարծ տեսա սովետական երկու վիրավոր զինվոր։ Նրանց բերի մեր տուն։ Ես ու տատս նրանց պառկեցրինք պահարանի ետևը և սեղանը քաշեցինք պահարանի առաջ։

Ամեն երեկո գերմանացիները գալիս էին մեր տուն և հարցնում. «Ռուս զինվոր կա»։ Բայց հենց որ լսում էի նրանց ոտնաձայնը, նախօրոք բարձրանում էի սեղանի վրա, կողքիս նստեցնում փոքրիկ քրոջս, և մենք սկսում էինք խաղալ։ Գերմանացիները գլխի չէին ընկնում, որ մեր տանը վիրավորներ կան պառկած։ Այդպես հինգ օր անցավ։ Վեցերորդ օրը մեր զորքերը գրավեցին գյուղը։ Վիրավորներից մեկին տարան հիվանդանոց։ Մյուսը այդ օրերին լավացավ և գնաց իր զորամասը։ Ես նրան տաք ձեռնոցներ նվիրեցի։ Գնալիս նա ինձ համբուրեց և ասաց. «Ապրես, աղջիկս»։

Շուտով ամբողջ ընտանիքով վերադարձանք մեր հայրենի քաղաքը։ Սիրտս խփում էր ուրախությունից։ Քաղաքի վրա կրկին ծածանվում էին կարմիր դրոշները։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 273.—Գտե՛ք և որոշեցե՛ք, թե յուրաքանչյուրը ինչ հոլովով է դրված։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 274.—Գտե՛ք միավանկ բառերը, բազմավանկ բառերը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 275.—Գտե՛ք եզակի և հոգնակի գոյականները։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 276.—Արտագրեցե՛ք բոլոր ածականները։

# ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՑԱՆԿ

## ԼՍՎՈՒՄ Է Թ, ԳՐՎՈՒՄ Է Դ

| | | | |
|---|---|---|---|
| ավելորդ | երդում | սարդ | հինգերորդ |
| արդ | երիտասարդ | վարդ | հորդ |
| արդեն | երկրորդ | խնդիր | մարդ |
| արդյոք | երրորդ | ծաղկաքաղաքարդ | նախորդ |
| արդյունք | գարդ | կարդալ | շոկոլադ |
| արդուկ | թակարդ | կոկորդ | որդի |
| բարդ | լիմոնադ | կախարդ | վարդան |
| բերդ | չորրորդ | հաջորդ | վարդուհի |
| գդալ | պակասորդ | հարդ | Տրդատ |
| | | | օդապարիկ |

## ԼՍՎՈՒՄ Է Բ, ԳՐՎՈՒՄ Է Գ

| | | | |
|---|---|---|---|
| Ավագ | կարգ | հոգի | մարաղ |
| արտակարգ | կարգապահ | հոգնակի | մուգ |
| Գևորգ | հոգնել | հոգս | շոգ |
| դասակարգ | հրձիգ | ձագ | ուղղաձիգ |
| երգ | հոգալ | ձգել | Սարգիս |
| ծաղել | հոգաբարձու | ճրագ | օգուտ |
| արագ | հոգերուխ | | |

## ԼՍՎՈՒՄ Է Փ, ԳՐՎՈՒՄ Է Բ

| | | | |
|---|---|---|---|
| Գարբիել | խաբեբա | շաբաթ | սրբագրել |
| դարբին | համբերել | ուրբաթ | սրբել |
| թմբկահար | համբուրել | սուրբ | սրբիչ |
| բոբք | համբույր | որբ | |



## ԼՍՎՈՒՄ Է Ղ, ԳՐՎՈՒՄ Է Ղ

| | | | |
|---|---|---|---|
| աղբ | գաղտաղողի | խեղդել | ողբ |
| աղճատել | գաղտնապահ | խեղճ | ողջ |
| աղքատ | գաղտնի | կաղկանձել | ողջույն |
| աղջամուղջ | եղբայր | կողք | պղտոր |
| բաղկանալ | զողալ | մեղք | քաղհան |
| բողկ | թուղթ | շղթա | քաղցր |
| բաղդատել | թղթակցել | չաղդամ | քաղց |
| գաղթ | | | |

## ԼՍՎՈՒՄ Է Ճ, ԳՐՎՈՒՄ Է Ջ

| | | | |
|---|---|---|---|
| արձակուրդ | առաձգական | ընդարձակ | մաղձ |
| արձակ | բաղձանք | ընձյուղ | պղինձ |
| արձան | բարձր | թանձր | սինձ |
| աղանձ | գեղձ | լորձ | վարձ |
| ատաղձ | դարձ | խուրձ | փորձանք |
| անդրադարձ | դեղձ | Համբարձում | օձ |
| անձնավորություն | դերձակ | հանձնել | օձիք |
| անձնուրաց | | | |

## ԼՍՎՈՒՄ Է Ջ, ԳՐՎՈՒՄ Է Ջ

| | | | |
|---|---|---|---|
| աղջիկ | եղջերու | իջնել | լուրջ |
| անխոնջ | անուրջ | հաջող | մրջյուն |
| աջ | եղջյուր | հրշեջ | նինջ |
| առաջ | երջանիկ | միջոց | շշունջ |
| առաջարկ | զիջել | մեջ | շուրջ |
| առջև | զղջալ | մեջք | չղջիկ |
| արջ | ընդառաջ | միջօրյա | վերջ |
| արջասպ | թրջել | միջակ | քրքիջ |
| դողդոջ | | | |

ՀՍՍՌ-ԱՄՍՀՊՀ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | | Էջ |
|---|---|---|
| I. | Կրկնողական վարժություններ | [illegible] |
| II. | Խոսք | 16 |
| III. | Նախադասություն | 19 |
| IV. | Համառոտ նախադասություն | 28 |
| V. | Ընդարձակ նախադասություն | 29 |
| VI. | Հարցական նախադասություն | 3[illegible] |
| VII. | Հրամայական նախադասություն | 4[illegible] |
| VIII. | Բացականչական նախադասություն | 4[illegible] |
| IX. | Պատմողական նախադասություն | 4[illegible] |
| X. | Համադաս լրացումներ ունեցող նախադասություններ | 4[illegible] |
| XI. | Մեկից ավելի ենթակա և մեկից ավելի ստորոգյալ ունեցող նախադասություններ | 5[illegible] |
| XII. | Զակերտի և անջատման գծի գործածությունը | 5[illegible] |
| XIII. | Գոյական անուն | 5[illegible] |
| XIV. | Հոլովում | 71 |
| XV. | Ածական անուն | 98 |
| XVI. | Թայ | 103 |
| XVII. | Անձնական դերանուն | 109 |
| XVIII. | Բառակազմություն | 111 |
| XIX. | Բարդ բառեր | 115 |
| XX. | Բառագիտություն | 116 |
| XXI. | Ուղղագրություն | 123 |
| XXII. | Կրկնողական վարժություններ | 131 |
| | Ուղղագրական բառացանկ | 134 |



Խմբագիր՝ Գ. Սեակ
Տեխն. խմբագիր՝ Հ. Կորդոյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Շ. Դեմիրճյան

ՎՖ 02551 Պատվեր 282. Տիրաժ 40.000 Տպագրական 8,5 մամ. Հրատարակչական 4,3 մամ. Հեղինակային 3,4 մամ. Հանձնված է արտադրության 11/IV 1951 թ. Ստորագրված է տպագրության 15/VI 1951 թ. Գինը 1 ռ. 60 կ.

Հայպետհրատի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. №65

ՀՀ Ազգային գրադարան
NL0233947

ԳԻՆԸ 1 Ռ. 60 Կ.

6884